

«Գրին Սոլուշնս» ՍՊԸ «Գեղարքունիքի մարզի Վարսեր,
Լճաշեն, Գեղամավան համայնքների տարածքներում
110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայանի և
110կՎ լարման սնող օղային գծի կառուցման»

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ)
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող՝ ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ

Մշակող՝ «ՆՈՎԱՆ» ՍՊԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	5
2. Հավելվածներ	6
3. Օգտագործվող հապավումները	6
4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը.....	6
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	13
6. Գործընթացի մասնակիցները.....	13
7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մշակման հիմքերը.....	16
8. Տեղակայման տարածքի և նախատեսվող գործունեության բնութագրերը	16
9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը	23
9.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ	23
9. 2. Սեյսմիկա և երկրաբանություն	24
9. 3. Կլիմա և օդային ավազան	24
9.4. Հողային ռեսուրսներ	28
9.5. Ջրային ռեսուրսներ.....	30
9.6. Կենսաբազմազանություն	35
9.7. Հատուկ պահպանվող տարածքներ	40
9.8. Պատմամշակութային հուշարձաններ	40
9.9. Բնության հուշարձաններ	41
9.10. Սոցիալական.....	41
10. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը	44
11. Նախատեսվող գործունեության հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները	45
11.1. Էլեկտրահաղորդման գծի տեխնիկական, տեխնոլոգիական լուծումները.....	45
11.2. Տրանսֆորմատորային ենթակայանի տեխնիկական, տեխնոլոգիական լուծումները.	45
12. Շինարարության փուլի տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները	48
12.1 Շինհրապարակ	48
12.2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ	49
12.3 Ենթակայանի շինարարության փուլ.....	49
12.4 Էլեկտրահաղորդման գծի շինարարության փուլ.....	50
12.5 Լուսավորություն և ջեռուցում	50
12.6 Բարեկարգում.....	50
12.7 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	51
13. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	53

13.1. Ջուր	53
13.2. Օգտագործվող նյութեր	54
14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....	54
14.1 Օդային ավազան	55
14.2. Հողային ռեսուրսներ	57
14.3. Ջրային ռեսուրսներ	57
14.4. Կենսաբազմազանություն.....	58
14.5 Թափոններ.....	58
14.6 Արտակարգ իրավիճակներ.....	59
14.7 Աղմուկ և թրթռում.....	60
14.8 Էլեկտրական և մագնիսական դաշտ	61
14.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	61
14.10 Աշխատանքի անվտանգություն և մարդու առողջություն	62
14.11 Սոցիալական ազդեցություն	62
14.12 Գումարային ազդեցություններ	63
14.13 Բարեկարգում	64
15. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում.....	64
15.1 Մթնոլորտային օդ.....	65
15.2 Հողի տնտեսական վնասի հաշվարկ.....	67
16. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր	68
16.1. Օդային ավազան.....	69
16.2. Հողային ռեսուրսներ	69
16.3. Ջրային ռեսուրսներ.....	70
16.4. Կենսաբազմազանություն.....	71
16.5. Թափոններ.....	71
16.6. Արտակարգ իրավիճակներ	72
16.7. Աղմուկ և թրթռում	73
16.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	74
16.10. Սոցիալական.	76
16.11. Բարեկարգում և կանաչապատում.....	76
17.Մոնիթորինգ (շինարարության և շահագործման փուլեր)	77
18.Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ	78
Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան	79

20. Հետնախագծային վերլուծություն	99
21. Հանրային ծանուցում և քննարկումներ	99
22. Բողոքների ընթացակարգ	99
23. Փակման փուլ.....	100
Գրականություն.....	101

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	Գեղարքունիքի մարզի Վարսեր, Լճաշեն, Գեղամավան համայնքների տարածքներում 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օղային գծի կառուցում:
Ձեռնարկող	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն համայնք:
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վարսեր, Լճաշեն, Գեղամավան բնակավայրեր:
Պատվիրատու	Կապալառու` «Փաուեր Էներջի» ՍՊԸ, իրավաբանական հասցեն է` Ք. Երևան Աբովյան 22Ա, բն. 45:
Պատվիրատուի հեռախոս, էլեկտրոնային փոստ:	հեռ. +374 4442224 Power Energy <powerenergyllc@yandex.com>
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Գեղարքունիքի մարզի Սևան համայնք, Վարսեր, Լճաշեն, Գեղամավան բնակավայրեր,
Աշխատանքային նախագծի մշակող	«Բարձր Վոլտ » ՍՊԸ
Գնահատման հայտի նախագծող	«Նովալ»ՍՊԸ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

Հավելված 2. Օդային գծի ուղեգիծը

Հավելված 3. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը

Հավելված 4. «ԳԱԱ հնագիտության ազգարության ինստիտուտ»-ի կողմից
կատարված տեղանքի ուսումնասիրության արդյունքները

Հավելված 5. Օդային ավազանի աղտոտման հաշվարկները շինարարության փուլում

Հավելված 6. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն,
մասնակիցների ցանկ

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՕԳ՝ օդային գիծ

ԲՀՊՏ՝ բնության հատուկ պահպանվող տարածք

ԷՄՆԸՊ՝ էլեկտրականության սանիտարական նորմեր և ընդհանուր պահանջներ

ՏԿ՝ տեխնիկական կանոնակարգ

ԲՄ՝ բաշխիչ սարք

ԲԲՄ՝ բաց բաշխիչ սարք

ՄՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն **ԿՎտ՝** կիլովատտ

ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր

4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)– Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային

համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների

պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)–Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)–սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված

կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ -Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Եյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օգոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օգոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս1998թ.)	2001	1998	2001	

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖
- ❖ ՀՀ կառավարության 19 նոյեմբեր 2014թ. «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում :

- ❖ ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 08 նոյեմբերի 2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» N1396 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 հունվարի 2007 թվականի «Սևան» Ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N 205-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 25 հուլիսի 2019 թվականի «ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն և 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 947-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2 ապրիլի 2009 թվականի «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 363-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վ Ո ԱՏ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն այս օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ:

Սույն գործունեությունը նախատեսում է 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցում:

Ենթակայանների կառուցումը համաձայն Օրենքի՝ ենթակա չէ ՇՄԱԳ-ի և փորձաքննության: Համաձայն Օրենքի՝ փորձաքննության ենթակա է բարձրավոլտ օդային գծերի (ՕԳ)կառուցումը՝ 110կՎ և ավել հզորության: Օդային գծի կառուցումը ենթակա է փորձաքննության՝ «Բ» կատեգորիայի ընթացակարգով:

Նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման(ՇՄԱԳ) և փորձաքննության երկու փուլով՝ նախնական և հիմնական:

Հայտի փորձաքննության (նախնական փուլ) արդյունքում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 18.04 2023թ. նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտին տրամադրվել է տեխնիկական առաջադրանք (ՏԱ- 23):

Օրենքով սահմանված կարգով՝ տեխնիկական առաջադրանքի հիման վրա իրականացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթաց, կազմվել է սույն ՇՄԱԳ հաշվետվությունը:

6. Գործընթացի մասնակիցները

Ձեռնարկող՝ «ԳՐԻՆ ՍՈԼՈԻԴՆՍ»ՍՊ ընկերության իրավաբանական հասցեն է՝ Գեղարքունիքի մարզ Լճաշեն համայնք: Ենթակայանը տեղակայվելու է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն 7/1 հողամասում «ԳՐԻՆ ՍՈԼՈԻԴՆՍ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում:

Կապալառու՝ «ՓԱՈԻԵՐ ԷՆԵՐԶԻ» ՍՊԸ: Կայանը կառուցվելու է համապատասխան մրցույթով ընտրված շինարարական կապալառուն:

Կայանը կառուցողը ընկերությունը պատասխանատու է նաև բնապահպանական կառավարման համար, որը ներառում է՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջների ապահովում,

- անհրաժեշտ թույլտվությունների և / կամ համաձայնությունների ձեռք բերում,
- մեղմացնող միջոցառումների իրականացում՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար,
- բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացման ապահովում,
- առողջության և անվտանգության պահանջների ապահովում:

Շրջակա միջավայրի նախարարություն

Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարման հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 8 օգոստոսի 2002 թվականի N 1237-Ն որոշմամբ:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից, գործընթացում ներգրավվում են նաև ՇՄՆ-ի առանձնացված ստորաբաժանումները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Նախարարության կարևորագույն գործառույթներից են նաև.

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, մրցունակության ապահովման, հասարակական առաջընթացի և երկրի անվտանգության բացառիկ կարևոր գործոն.

- մշակույթի զարգացմանը նպաստելը.

- մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը նպաստելը:

Նախարարությունը գործընթացին կարող է մասնակցել նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի առկայության

կամ հայտնաբերման դեպքում:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Նախարարությունը մշակում և իրականացնում է նաև ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի N 740-Լ որոշմամբ:

Սևան համայնք, շահագրգիռ հանրություն

Սևան խոշորացված համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզում: Ներառում է Վարսեր, Գեղամավան և Լճաշեն բնակավայրերը: Համայնքը ստեղծվել է 2021թ.-ի դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային Ժողովում համայնքների խոշորացման օրինագծով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի, ՀՀ կառավարության 1325-Ն որոշման՝ Սևան խոշորացված համայնքում իրականացվելու են չորս փուլով հանրային քննարկումներ, որոնցից երեքն արդեն իրականացվել են:

«ՀԷՑ» ՓԲ ընկերություն

Ձեռնարկողին է տրամադրում տեխնիկական պայման, որի հիման վրա իրականացվելու է գործունեությունը:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Համաձայն 2005թ. հոկտեմբերի 24-ի «Տեխնիկական անվտանգության ապահովման Պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի «Նախքան արտադրական վտանգավոր օբյեկտի գործարկումը (վերագործարկումը) փորձագիտական եզրակացությամբ պետք է հավաստված լինի օբյեկտի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին»:

Նշված եզրակացությունը Օրենքով սահմանված կարգով կստացվի շինարարության ավարտից հետո, մինչև գործունեության գործարկումը:

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մշակման հիմքերը

- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը SՊ-510-110/0052-1 առ 22.09.2022թ.՝ Հավելված 3:
- Նախագծային փաստաթղթերը:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.- ի օրենքը:
- Ոլորտին առնչվող նորմատիվա իրավական փաստաթղթերը:
- Ոլորտին առնչվող միջազգային կոնվենցիաները, համաձայնագրերը:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 18.04 2023թ. նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտին տրամադրված տեխնիկական առաջադրանքը (SU- 23):

8. Տեղակայման տարածքի և նախատեսվող գործունեության բնութագրերը

8.1 Նախատեսվող գործունեության նպատակն է ջերմոցային տնտեսության էլեկտրամատակարարման իրականացման համար կառուցել 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայան և 110կՎ լարման սնող օղային գիծ:

Էլեկտրահաղորդման գծի 110/10կՎ ԵԿ-ի միացումը 110կՎ «Ախթամար» ՕԳ-ին իրականացվելու է ճյուղավորման սխեմայով: Նախագծվող 110կՎ ՕԳ-ի ճյուղավորումը իրականացվում է գոյություն ունեցող 110կՎ «Ախթամար» ՕԳ-ի N58 Մ1M տիպի խարսխաանկյունային հենարանից:

ՕԳ-ի ուղեգծի վերջը՝ նախագծվող 110/10կՎ ԵԿ-ի պորտալներն են:

Օղային գծի ուղեգիծը անցնում է Գեղամավան, Վարսեր բնակավայրերի տարածքով:

Նախագծվող ՕԳ-ի երկարությունը N58 Մ1M հենարանից մինչև ԵԿ-ի պորտալներ կազմում է 4609.0մ:

8.2 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը: Հետագոտվող տարածքները գտնվում են Սևանի լեռնաշղթայի հյուսիս-արևմուտքում, Հրազդան գետի ձախափնյակում, Սևանա լճի հյուսիս արևմտյան ափին, մայրաքաղաք Երևանից 66 կմ հյուսիս-արևելք և մարզկենտրոն Գավառից 35 կմ հյուսիս: Տեղանքը հիմնականում լեռնային է: Նախատեսվող գործունեությունը տեղակայվելու է Սևան համայնքի Գեղամավան, Վարսեր, Լճաշեն բնակավայրերի վարչական տարածքներում:

Օղային գծի ուղեգծի տարածք՝ 4609,0 երկարությամբ անցնելու է Գեղամավան, Վարսեր, բնակավայրերին պատկանող տարածքով: Տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 1876.0մ÷1986.0 մ սահմաններում (Հավելված 2):

Հողի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր:

Ենթակայանի տարածք նախատեսվում է տեղադրել Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի 7/1 հողամասում: Ենթակայանի տարածքը զբաղեցնելու է 2000 քառ. մ: Ենթակայանի տարածքը տեղ-տեղ խոտածածկ է, աճում է տարախոտային բուսականություն, տարածքում այլ շինություններ կամ կառույցներ չկան: Ենթակայանի տարածքում և կից տարածքներում այլ արտադրություններ չկան:

Նկար 1



Ենթակայանի տարածքի հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրության նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:(Հավելված 1): Ձեռնարկողը դիմել է հողի նպատակային նշանակությունը էներգետիկ ենթակառուցվածքների հողերի նշանակության փոխելու նպատակով:

2022 թվականի սեպտեմբեր ամսին «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից կատարվել են տարածքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություն՝ ՀՀ Գեոարքունիքի մարզի Սևան համայնքի Գեղամավան, Վարսեր, Լճաշեն բնակավայրերի 110կվ լարման օդային գծի և 110/10կվ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման տարածքներում:

Հիդրոերկրաբանական տեսակետից Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով դրանից, հետազոտվող տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լճի մեջ: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5-10մ -ից ցածր հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարսոտը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքը երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման միջոցով, ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երկու շերտեր: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ-1. Ավազակավեր բացից մինչ մուգ շագանակագույն, տեղ-տեղ մոխրագույն և դարչնագույն, կարմրավուն երանգի պինդ թանձրությամբ, թույլ խոնավ, թեթև, ավազային խճի մանրախճի պարունակությամբ 15-20%: Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5- 82-ի (33r) III կարգ է:

Շերտ-2. Խճային գրունտ տեղ-տեղ խճաքարերի պարունակությամբ ավազակավային լցոնումով 20-25%: Լցոնումը թույլ խոնավ և պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (13) IV կարգ է:

Ուսումնասիրվող տարածքում գրունտները բարենպաստ են շինարարություն կատարելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է շերտ 1-ը՝ ավազակավեր, շերտ 2-ը՝ խճային գրունտներ՝ ավազակավի լցոնով:

Սեյսմիկ բնութագրերը՝ ՀՀՇՆ 20.04.2020-ի տեղագնվող տարածքի գրունտներն ըստ ֆիզիկամեխանիկական հատկանիշների.

- ավազակավերը III կարգի են, խճային գրունտները II կարգի են:

- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 114 սանտիմետր:

- Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն ուսումնասիրությունների՝ հողաբուսաշերտը տեղ-տեղ բացակայում է, տեղ տեղ կազմում է 0,10, տեղ-տեղ 0,15- 0,20մ հզորություն, 0,10-3,0մ կազմում են ավազակավերը՝ խճի, մանրախճի, խճային գրունտի պարունակությամբ:



Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրվել են համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանության»: Ուսումնասիրվող գոտին համաձայն՝ «Շինարարական կլիմայաբանության» (ՀՀՇՆ II-7.01-2011)-ի՝ գտնվում է «ցուրտ կլիմայական շրջանում: Շրջանն ունի լեռնային և խիստ ցամաքային կլիմա ցուրտ ձմեռով և զով ամառով:

Համաձայն ՀՀՇՆ II-7-01-2011 նորմերի, քամու նորմատիվային առավելագույն արագությունը 25 տարվա կրկնելիությամբ 25մ/վրկ է (հաշվարկներում քամու նորմատիվային առավելագույն արագությունը ընդունված է 35մ/վրկ):

Օդի առավելագույն ջերմաստիճանը՝ $t_{max}=+30^{\circ}C$

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ $t_{\text{մջ}}=+5^{\circ}C$

Նվազագույն ջերմաստիճանը՝ $t_{min}=-25^{\circ}C$

Հաղորդալարերի վրա առաջացող մերկասառույցի պատի հաստությունը 20մմ է: Համաձայն տեխնիկական կանոնակարգի, սառցակեղևի խտությունը ընդունված է 0.9գ/սմ^3 :

Հենարանների տեղադրման վայրերի կոորդինատները WGS համակարգում

Աղյուսակ 1


Հ/հ	Հենարանի համար	X կոորդինատ	Y կոորդինատ
1	N1	8490809.364	4491195.193
2	N2	8490806.005	4491165.831
3	N3	8490752.474	4490996.001
4	N4	8490802.572	4490865.281
5	N5	8490853.393	4490732.668
6	N6	8490808.152	4490502.420


7	N7	8490799.367	4490257.562
8	N8	8490790.637	4490012.747
9	N9	8490773.831	4489860.668
10	N10	8490792.264	4489709.389
11	N11	8490763.296	4489509.688
12	N12	8490779.097	4489383.660
13	N13	8490808.370	4489151.483
14	N14	8490861.590	4489037.285
15	N15	8490917.874	4488916.791
16	N16	8490981.705	4488780.035
17	N17	8490895.336	4488639.521
18	N18	8490794.664	4488475.812
19	N19	8490725.626	4488327.804
20	N20	8490638.548	4488141.113
21	N21	8490551.453	4487954.417
22	N22	8490476.207	4487793.104
23	N23	8490440.539	4487639.193
24	N24	8490397.754	4487455.664
25	N25	8490455.061	4487255.643
26	N26	8490563.590	4487156.496
27	N27	8490714.899	4487018.204

Ենթակայանի անկյունների կոորդինատները WGS համակարգում

Աղյուսակ 2

Հ/հ	Ենթակայանի անկյուն	X կոորդինատ	Y կոորդինատ
1	Չախ վերևի անկյուն	8490696.362	4486999.604
2	Չախ ներքևի անկյուն	8490696.362	4486944.756
3	Աջ վերևի անկյուն	8490731.762	4486999.604
4	Աջ ներքևի անկյուն	8490731.762	4486944.553





Գործունեության ենթակա տարածքում բացակայում են մակերևութային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Սևանի լիճն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 4 կմ և ավել հեռավորության վրա:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը գտնվում է 1,2կմ, իսկ բնության հատուկ պահպանվող «Սևան» ԱՊ-ից՝ 4.6կմ հեռավորության վրա:

Գործունեության հարակից տարածքները գյուղատնտեսական մշակովի ցանքատարածություններ և արոտավայրեր, պետական անտառային հողեր են:

Տարածքում և հարակից տարածքներում գերակշռում են տափաստանային, տեղ տեղ բարձր հիմնայնության լեռնային սևահողերը, ֆոսֆորի ցածր պարունակությամբ, տարածված է տարախոտատափաստանային բուսականությունը:

Գործունեության ենթակա տարածքում ՀՀ Կարմիր զրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ագրեցության գոտում գտնվելու հանգամանքով:

Էլեկտրահաղորդման գծերը նախագծելիս ամբողջությամբ պահպանվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության գոտին:

23


Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ավսեսաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

9. 2. Սեյսմիկա և երկրաբանություն

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան փերում: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելիեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես, կրելով սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերը ներծծվելով ապարների շերտերով ու ծակոտիկներով, սեզոնային բնույթի աղբյուրների և ժամանակավոր հոսքերի տեսքով բեռնաթափվում են Սևանա լիճ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության տեղագրնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Գծապատկեր 3



9. 3. Կլիմա և օդային ավազան

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում), ձմռանը չափավոր ցուրտ է:

Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Միջին ջերմաստիճանն հասնում է $+18^{\circ}+20^{\circ}$: Տեղումները շատ չեն՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ: Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները Սևան քաղաքի համար՝ որպես խոշորացված համայնք:

Օդի ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Աղյուսակ 3

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների $^{\circ}\text{C}$												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
ք. Սևան	1937	-8,2	-7,4	-3,3	3,5	8,8	12,1	15,7	15,7	12,2	6,4	0,6	-5,5	4,2	-33	32

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 4

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
ք. Սևան	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	75	53

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 5

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը				
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					

ք. Սևան	<u>25</u> 21	<u>30</u> 26	<u>40</u> 26	<u>65</u> 52	<u>103</u> 46	<u>79</u> 45	<u>50</u> 43	<u>40</u> 74	<u>37</u> 44	<u>51</u> 59	<u>38</u> 50	<u>25</u> 26	<u>583</u> 74	93	136	252
---------	-----------------	-----------------	-----------------	-----------------	------------------	-----------------	-----------------	-----------------	-----------------	-----------------	-----------------	-----------------	------------------	----	-----	-----

Քամի

Աղյուսակ 6

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմության կրկնությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					25	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Սևան ք.	805,5	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28
			4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7							
		ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3,3					
			3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4							
		հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3,1					
			4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8							

Արեգակնային ճառագայթումը

Աղյուսակ 7

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ²												
	ըստ ամիսների											Տարեկան գումարային	
	Հուն- վար	Փետր- վար	Մարտ	Ապ- րիլ	Մա- յիս	Հու- նիս	Հու- լիս	Օգոս- տոս	Սեպ- տեմբեր	Հոկ- տեմբեր	Նոյեմ- բեր		Դեկ- տեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևան	356	453	700	818	987	978	995	917	695	547	375	311	8133

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Սևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1937մ բարձրության վրա՝ ցուրտ կլիմայական գոտում: Քաղաքին բնորոշ են զով, քամոտ ամառը՝ օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C է, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0- 6.0 մ/վ:

Ձմեռը՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 114 սանտիմետր:

Օդային ավազան. Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 օդերևութաբանական կայաններում՝ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ:

Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Համաձայն 2021թ. ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկագրի՝ Գեղարքունիքի մարզում 2020թ. անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակները կազմում են.

- Փոշի- 2146.51տ/տարի
- Ազոտի օքսիդ-82.9տ/տարի
- Ծծմբի երկօքսիդ-3.09տ/տարի

Մթնոլորտային օդի որակի արդյունքներն ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան ամփոփ տեղեկագրի՝ օդի որակի կատարված դիտարկումների վերաբերյալ տեղեկատվությունում Գեղարքունիքի մարզի բնակավայրերը ներկայացված չեն:

Նկար 5



Իսկ Հայեկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի¹ ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները² ժամկետանց են:

9.4. Հողային ռեսուրսներ

Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն:

Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են լեռնային սևահողերը, անտառային դարչնագույն հողերը: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով: Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էռոզիան, ավազներձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Նկար 6



Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք:

Լեռնային սևահողերն օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր,


իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (գարի, երկարամյա խոտեր):

Հանքաբանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Ներակայացվում է հողերում մետաղների պարունակության և աղտոտվածության ցուցանիշները համաձայն՝ 2022թ. տարեկան տեղեկագրի, որտեղ ներառված է նաև Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը:

Մարզ/Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ							
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3



9.5. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900,47 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձևավորված ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր,

ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան:

Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83,3 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգտգործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը՝ մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Մաքման կայանների նախատեսումը և ավամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետությունը միջոցներով ջրածածկ անտառափային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Համաձայն կազմակերպության կողմից 2022թ. 4-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 12 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում:

Նկար 7



Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքի, 2022թ տարեկան տեղեկագրի՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակերեսը կազմել է 1276.418 կմ², իսկ ծավալը՝ 37.8964 կմ³:

Մեծ Սևանի ջրի որակը 2022 թվականին հիմնականում գնահատվել է 4-րդ («անբավարար» որակ) կամ 5-րդ դաս («վատ» որակ), իսկ Փոքր Սևանինը՝ հիմնականում 4-րդ դաս («անբավարար» որակ), երկու դեպքում էլ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով: Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ:

Ամբողջապես չմաքրված կեղտաջրերն իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:

Աղյուսակ 8

Աղյուսակ 18. Մնանա լճի ջրի որակը 2022թ.


Տեղագրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Արփա, ափամերձ (մակերևութից) (119-ՄՄ)	Անոնիում իոն, մանգան, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ալյումին	4-րդ	
	Լիտրիտ իոն	5-րդ	
Արփա, ափամերձ (7մ խորությունից) (119-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Լորատուզ, կենտրոնական (մակերևութից) (124-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Լորատուզ, կենտրոնական (7մ խորությունից) (124-ՄՄ)	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Լորատուզ, կենտրոնական (15մ խորությունից) (124-ՄՄ)	Ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
	Լուծված օքսիգեն	4-րդ	
	Լիտրիտ իոն	5-րդ	
Լորատուզ, կենտրոնական (30մ խորությունից) (124-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ	
	Լիտրիտ իոն	5-րդ	
	Լիտրիտ իոն	5-րդ	
Լորատուզ, ափամերձ (մակերևութից) (124-ՄՄ)	ԹՔՊ, կիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Լորատուզ, ափամերձ (7մ խորությունից) (124-ՄՄ)	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (մակերևութից) (126-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, կիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (7մ խորությունից) (126-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (20մ խորությունից) (126-ՓՄ)	ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, կիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (30մ խորությունից) (126-ՓՄ)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Լիտրիտ իոն	5-րդ	
Արփա, ափամերձ (մակերևութից) (126-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, կիտրիտ իոն	4-րդ	
Արփա, ափամերձ (7մ խորությունից) (126-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (119-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Լիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (7մ խորությունից) (119-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, կիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (20մ խորությունից) (119-ՄՄ)	Ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (30մ խորությունից) (119-ՄՄ)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, կիտրիտ իոն, մանգան	4-րդ	

Տեղագրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի քննահանրական դաս
Մոզելային, կենտրոնական (մակերևութից) (127'-ՓՄ)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մոզելային, կենտրոնական (7մ խորությունից) (127'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մոզելային, կենտրոնական (30մ խորությունից) (127'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, քնդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Մոզելային, ափամերձ (մակերևութից) (127'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մոզելային, ափամերձ (7մ խորությունից) (127'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Գյունեյ, կենտրոնական (մակերևութից) (130'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Գյունեյ, կենտրոնական (7մ խորությունից) (130'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Գյունեյ, կենտրոնական (20մ խորությունից) (130'-ՓՄ)	ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Գյունեյ, կենտրոնական (30մ խորությունից) (130'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Գյունեյ, ափամերձ (մակերևութից) (130'-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Գյունեյ, ափամերձ (7մ խորությունից) (130'-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Շորժա, կենտրոնական (մակերևութից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Շորժա, կենտրոնական (7մ խորությունից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Շորժա, կենտրոնական (30մ խորությունից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, քնդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Շորժա, ափամերձ (մակերևութից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Շորժա, ափամերձ (7մ խորությունից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ներկայացվում է Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը՝ համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի:

Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը սեպտեմբերի 5-11-ը. (2022թ.)




9.6. Կենսաբազմազանություն

Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը:

Տարածաշրջանը լեռնային է և բնորոշվում է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականությամբ՝ ցածր և միջին լեռնաանտառային, մարգագետնատափաստանային, մերձալպյան, ալպյան: Բնական անտառները՝ գիհի և կաղնի ծառատեսակներով ոչ մեծ կղզյակներով տեղակայված են Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա, իսկ առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում:

Նկար 8



Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500մ՝ տափաստանային և գորշ կարբոնատային, անտառային տիպերով: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաձիմ հացազգի խոտաբույսերի,

փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են հիմնականում գիհու և կաղնու անտառները: Իսկ ցածրադիր վայրերում, լճից ազատված ավազուտների վրա գերակշռում են անապատներն ու կիսաանապատները: Որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաճ գիհուտները և այլն:

Բուսական աշխարհ: Մարզի հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրությունները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը:



Նկար 9. Չիչխան

Տարածված են նաև արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sqrbus kuznetsqvii*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական (*S.graeca*)), մասրենու (*Rqsa spinqsissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus qrientalis*), ուռենու (*Salix caprea*) և այլ համակեցություններ:

Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP): Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32

ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca* sp.), որումի (*Lolium* sp.) 95.1 և դաշտավլուկների (*Poa* sp.) տարբեր տեսակներ:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ՝ հարուստ և բազմազան: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոգնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոգնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային /*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ Ֆյոդորովի-*Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի-*Isatis sevangensis* N. Busch, Թրաշունյան հայաստանյան-*Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:



Նկար 10. Վիշապագլուխ ավստրիական



Նկար 11. Գառնառվույտ հայկական

Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքի շուրջ 60 բուսատեսակներ օգտագործվում են որպես դեղաբույսեր, իսկ շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով՝ 44 տեսակ կաթնասուններ՝ գիշատիչներ, միջատակերներ, կրծողներ, չղջիկներ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձկներ:

Կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին.

- ❖ Միջատակերներ (Insectivora),
- ❖ Կրծողներ (Rodentia),
- ❖ Նապաստակներ (Logomorpha),
- ❖ Չղջիկներ (Chiroptera),
- ❖ Գիշատիչներ (Carnivora),
- ❖ Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Համաձայն «Գեղարքունիք 1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հողվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը կլիմայավարժեցված սիգն է (*Whitefish-Coregonus lavaretus*): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan 17 barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ՝ Ցատկողներ (*Salientia*) կարգին պատկանող՝ Լճագորտ (*Rana ridibunda*), Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Սողուններից հանդիպում են՝ Սպիտակափոր ժայռային, Նաիրյան ժայռային, Ռոստոմբեկովի ժայռային, Հայկական ժայռային, Վալենտինի ժայռային մողեսները, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իծը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի

ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի իջեցումը, ինչպես նաև ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների վրա:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ՝ ձկնկուլ (*Pelecaniformes*) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (*Ciconiiformes*) - 11 տեսակ, ֆլամինգո (*Phoenicopteriformes*) - 1 տեսակ, հոպուպ, սագեր, բադեր և այլն: Թռչուններից 48 տեսակը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Պարկում մեծ պոպուլյացիաներով հանդիպում են՝ մեծ քնամուկը (*Glis glis*), պարսկական սկյուռը (*Sciurus persicus*), անտառային մուկը (*Apodemus sylvaticus*), այծյամը (*Capreolus capreolus*), լայնականջ ոզնին (*Tadarida teniotis*) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (գործ արջը, ջրասամույրը, անտառային կատուն, բեզուարյան այծ-*Capra aegagrus* Erxleben և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica* Darevsky, 1953) և փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi* Darevsky 1957), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուսն - *Pelecanus onocrotalus* Linnaeus, ձկնկուլը և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - *Oxyura leucocephala* Scopoli, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն (*Barbus goetschaicus* Kessler) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi*, Filippi) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռ - *Maculinea arion zara* Jachontov, Մթնշաղային կապտաթիթեռ - *Maculinea nausithous*, Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus* Dantchenko, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae* Forster, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus* Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:



Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

9.7. Հատուկ պահպանվող տարածքներ

Մարզի բնության հատուկ պահպանվող տարածք է «Սևան» ազգային պարկը՝ 150,1 հազ. հա մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթների միջոցով: Այն բաժանվում է չորս՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրացիոն և տնտեսական գոտիների: Պարկի տարածքում են գտնվում «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի» արգելոցները՝ 7464 հա ընդհանուր մակերեսով, որից ցամաքայինը կազմում է 4289 հա, ջրայինը՝ 3175 հա: Այստեղ է գտնվում նաև երկու՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերն՝ ընդհանուր 2652 հա մակերեսով:

Գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ից 4,6 կմ հեռավորության վրա:

9.8. Պատմամշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Գեղամական, Վարսեր և Լճաշեն բնակավայրերի վարչական տարածքների համար հուշարձանների ցանկը՝ Հավելված 3:

Լճաշենի տարածքում առկա են Սուրբ Աստվածածին եկեղեցի 17-րդ դար, գերեզմանոց խաչքարերով 10-18 ըդ դար, Դամբարանադաշտ Ք.ա. 2-1 հզմ, Մատուռ 10-14 ըդ դար: Լճաշեն համայնքի տարածքը համարվում է թանգարան՝ բաց երկնքի տակ: Սևանա լճի մակարդակի իջնելու հետևանքով Դամբարանադաշտի հարավային ծայրին, երևում է Լճաշենի կիկլոպյան ամրոցն ու հնագույն քաղաքատեղիի մնացորդները, որը գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն և տարածվում 15 բլուրների վրա:

Կատարված պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են նախապատմական շրջանի բնակատեղիներ, բերդ-ամրոցներ, 3-2-րդ հազարամյակների դամբարանադաշտեր ու առանձին կոթողներ:

Գյուղում և նրա շրջակայքում կան ինչպես Արամեան շրջանի, Արարատյան թագավորության, այնպես էլ Արտաշեսյան, քրիստոնեական ժամանակաշրջանների հուշարձաններ, պաշտամունքային կոթողներ: Լճաշեն հնագիտական հուշարձանը համաշխարհային ճանաչում ստացավ գյուղից 3 կմ հարավ-արևելք, լճի ափամերձ հատվածում գտնվող բրոնզեդարյան դամբարանադաշտի շնորհիվ: Այն զբաղեցնում է 8 հեկտար տարածք և ընդգրկում է շուրջ 800 դամբարան:

Գեղամական գյուղի հարավ-արևմտյան մասում է գտնվում Սուրբ Հովհաննես եկեղեցին, արևմտյան կողմում՝ Սուրբ Աստվածածին մատուռը:

Վարսեր գյուղում առկա է 19-րդ դարում կառուցված եկեղեցի՝ սբ Ստեփանոս անունով, որի պատերի վրա առկա են 12-14-րդ դարերի բարձրարվեստ խաչքարեր: Առկա են նաև Սբ. Գրիգոր Նարեկացի մատուռը, «Ծաղկավանք», «Նարեկ» «Խաչեր», «Օխնություն»

սրբավայրերը, երկրորդ աշխարհամարտում զոհվածների նվիրված հուշահամալիր և արցախյան ազատամարտի հերոսներ նվիրված հուշարձան-կոթողներ, անհիշելի ժամանակներից կառուցված «Հին ջրանցքը», խաչքարերով հարուստ հին գերեզմանատունը:

9.9. Բնության հուշարձաններ

Գեղարքունիքի մարզում և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր:

Գործունեության ենթակա վարչական տարածքներում առկա են երկու Երկարաբանական հուշարձաններ.

Աղյուսակ 9

23.	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արևելյան ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
24.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ

Նախատեսվող գործունեության տարածքում չկան բնության հուշարձաններ, մոտակա բնության հուշարձանը գտնվում է 1,2 կմ հեռավորության վրա:

9.10. Սոցիալական

Մարզի տարածքը կազմում է 5352քառ.կմ, ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական բնակավայրեր: Մարզի տարածքում է գտնվում Սևանա լիճը և «Սևան»ԱՊ-ը: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: 2021թ. տարեսկզբի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 227,3հազ. մարդ:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը: 2020թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են

- արդյունաբերություն 3.3 %
- գյուղատնտեսություն 11.9 %
- շինարարություն 4.7 %
- մանրածախ առևտուր 2.3 %

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սևան խոշորացված համայնքի՝ Վարսեր, Գեղամավան, Լճաշեն գյուղական բնակավայրերի վարչական տարածքներում:

Ք. Սևան, համայնքը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության, ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա: 2021թ. տարեսկզբի տվյալներով ունի 19.0հազ. բնակիչ:

Քաղաքի զարգացման հիմնական ուղղությունը թեթև արդյունաբերությունը և զբոսաշրջությունն է: Սևան համայնքը զբաղեցնում է 1784.68հա հողատարածք: Ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով, ունի գրունտային ջրերի բարձր մակարդակ: Տարածված են թույլ անկայուն լճային կարբոնատային ավազները, կավեր, ավազակավեր, խճեր:

Կլիման մեղմ է, բարձր լեռնային՝ չափավոր տաք ամառ և չափավոր սառը, քամոտ ձմեռ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է -12,5°C, հուլիսին՝ +22,5°C: Տարվա ընթացքում գերիշխում են հյուսիսային, հարավ-արևմտյան և արևմտյան ուղղության քամիները: Քաղաքի օդային ավազան արտանետումների հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման համակարգերը: Մարզը գազիֆիկացված է:

Լճաշեն բնակավայրը. գտնվում է Գեղամա և Փամբակի լեռնաշղթաների գոգավորությունում՝ Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Ունի համեմատաբար բարենպաստ կենսապայմաններ, ընդարձակ և հարթ սևահողային տափաստան, որը գյուղի հացի շտեմարանն է: Համայնքի տարածքը կազմում է 5953.96 հա, բնակչությունը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է թ. 4708 մարդ: Որպես բնակավայր գյուղն անվանվել է Լճաշեն 1946թ-ից: Հանայնքում առկա է դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, արվեստի դպրոց, գրադարան:

Լճաշենի կլիմայի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կազմում է՝ հունվար ամսին օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -30 աստիճան, իսկ օգոստոսին բարձրանում է +30°: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է մինչև 600 մմ:

Հարուստ է Լճաշենի բուսաշխարհը (բացված գրունտների բույսեր, արմատական ափամերձ բույսեր, ալպյան գոտու բույսեր), հաշվվում է շուրջ 1600 բուսատեսակ, որոնցից 1500-ը ծաղկավոր բույսեր են: Գյուղում, բացի հայկական և իրանական տեսակներից, կան նաև բույսերի էնդեմիկ տեսակներ: Դրանց մեջ քիչ չեն նաև դեղաբույսերը: Բուսականությունից հանդիպում են վայրի ցորեն, վայրի կորնգան, մապրենու և ասպիրակի թփուտներ, ինչպես նաև հանդիպում են նաև դեղաբույսերի զանազան տեսակներ:

Համայնքի վարչական սահմաններում տարածված կենդանիներն են՝ գայլը, աղվեսը, գորշուկը, կզաքիսը, բեզուարյան այծը, կրծողներից՝ ճագարամուկը, գետնյասկյուռը,

թռչուններից՝ անգղը, արծիվը, կռունկը, լորը, արտույտը, սարյակը, կկուն, ճնճղուկը, սողուններից՝ վահանագլուխ իծը, գյուրգան:

Համայնքում բնակիչներն իրենց տնամերձ հողամասերում զբաղվում են հիմնականում պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, սալոր: Հացագգի մշակաբույսերից գյուղի վարելահողերում մշակում են կերային մշակաբույսեր՝ աշնանացան ցորեն, գարնանացան գարի, վարսակ, հաճար, կարտոֆիլ՝ հիմնականում սեփական կարիքները հոգալու համար:

Զբաղվում են խոշոր և մանր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքում գործում է կենտրոնացված աղբահանությունը:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 195.78 հեկտար հատուկ պահպանվող տարածքի պահպանումն ու խնամքը իրականացվում է «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից:

Համայնքի հիմնախնդիրներից է բնակարանների, փողոցային ցանցի հիմնանորոգումը, զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը:

Գեղամավան գյուղական բնակավայրը գտնվում է Հրազդան գետի ձախափնյա հատվածում, մարզկենտրոնից 37կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից՝ 1850մ բարձրության վրա: Համայնքի վարչական տարածքը կազմում է 3128,37հա՝ ծովի մակարդակից 1800-2450մ բարձրությունների վրա: Ունի լեռնային ռելիեֆ: Տնտեսության հիմնական ուղղությունը համարվում է անասնապահությունը՝ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, խոզաբուծություն, թռչնաբուծություն: Իսկ բուսաբուծությունը հիմնականում ուղղված է կերի բազայի ապահովմանը: Մշակվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի, հաճար, բազմամյա բակլագգի խոտաբույսեր և կարտոֆիլ: Համայնքային ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում, իրականացվում է կենտրոնացված աղբահանություն:

Բնակչությունը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1804 մարդ: Համայնքում գործում է դպրոց, մանկապարտեզ, նախակրթարաններ, մանկապարտեզ:

Համայնքի հիմնախնդիրներից է արտագաղթը, ներբակային ճանապարհների հիմնանորոգումը, լուսավորությունը:

Վարսեր բնակավայրը գտնվում է Սևան քաղաքից հարավ-արևմտյան մասում՝ 3,6կմ հեռավորության վրա: Գտնվում է Հրազդան գետի ցամաքած հունի հովտում՝ լեռնալանջի վրա: Հին բնակատեղի է: Վարչական տարածքը կազմում է 3659,59հա: Ունի լեռնային ռելիեֆ՝ արևմտյան մասում հարթ է: Ռելիեֆի նիշերը տատանվում են՝ արևմուտք-հյուսիս-արևմուտքում 2010-2030մ, հարավ-արևելքում 2020- 2030մ, իսկ հյուսիս-արևելքում՝ 2040 մետրի սահմաններում: Գյուղի հարավային մասից, շուրջ 6 կմ հեռավորության վրա ձգվում է Գեղամա լեռնաշղթան:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ զով: Միջին տարեկան ջերմաստիճանը 60C է: Ամենատաքը օգոստոս ամիսն է՝ միջին ջերմաստիճանը 200C է, իսկ ամենացուրտը հունվարը՝ -10 ° C-ի: Տարեկան միջին տեղումների քանակը կազմում է 749 մմ:

Գյուղի շրջակայքին բնորոշ է մարգագետնատափաստանային, անտառային-դարչնագույն և գորշ անտառային հողերի առկայությունը: Հիմնական ծառատեսակներից

տարածված են ուռենին, բարդին, սոճին, թեղին, արջընկույզը, և մրգատու ծառատեսակները (խնձորենի, բալենի, սալորենի, տանձենի, ընկուզենի, մասրենի), մերձալպյան գոտում աճում են հատիկաբուսային տեսակները՝ այծամորուք, աստղաբույս, ավելուկ, արմավաթուփ, աղվեսագի, ձիասամիթ (բոխի), գնարբուկ, դաղձ, երիցուկ (դեղատնային), եզան լեզու, եղինջ, լերդախոտ, լոշտակ, խնկածաղիկ, մատուտակ, ոզնենի (կլորագլուխ), ուրց, ուրցադաղձ, վիրախոտ, տատրակ, հավախոտ և այլն:

Կաթնասուններից լայն տարածում ունեն՝ սովորական դաշտամուկը, գորշ գերմանամուկը, սովորական խլուրդը, աքիսները, սողունները, ժայռային մողեսները, օձերը: Լեռնային գոտիներում հանդիպում են՝ աղվեսներ, գայլեր, իսկ թռչուններից՝ արծիվներ, հոպոպներ, խաղտոտիկներ, դեղնափոր սարյակներ, ծիծեռնակներ:

Բնակչությունը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2034 մարդ: Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ: Զբաղվում են հացահատիկի (գարնանացան գարի, ցորեն, հաճար), կերային կուլտուրաների (առվույտ, կորնգան) և կարտոֆիլի մշակությամբ:

Գյուղում զարգացած է կաթնատու և կաթնամսատու տավարաբուծությունը: Կաթը մթերվում է, և ամբողջ արտադրության կեսից ավելին ենթարկվում է արդյունաբերական վերամշակման: Գյուղում գործում է կաթի վերամշակման գործարան: Գյուղում առկա դպրոց, մշակույթի տուն, գրադարան, բուժկայան: Գյուղի տարածքում է գտնվում 35-40 հազար մ խոր. տարողություն ունեցող Վարսերի ջրամբարը, գյուղի հյուսիս-արևմտյան լանջերի միջև գտնվող Չոչո ջրվեժը: Գյուղը հարուստ է՝ Խառնարան, Կլոր դար, Սևսար բլուրներով և Կարմիր Սև, լեռ, Ցլուզլուխ, Բարոժ լեռներով:

Հիմնախնդիրներից է՝ գյուղի ջերմամատակարարումը, ընդհանուր կոյուղահեռացումը, արտաքին լուսավորությունը:

10. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը

ՇՄՍԳ հաշվետվության շրջանակներում դիտարկվել են գործունեության իրականացման այլընտրանքային և գրոյական տարբերակները:

Զրոյական տարբերակ նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում:

ՕԳ-ի չիրականացումը ջերմոցային տնտեսությանը կգրկի էլեկտրաէներգիայի մատակարարումից, հնարավորություն չի ունենա կայանալ կամ կարող է իրականանալ այլ վառելիքի օգտագործմամբ, ինչը շրջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն: Նշված դեպքում բացասական ազդեցությունները կլինեն նաև սոցիալական ոլորտում, նոր աշխատատեղեր ուղղակի չեն առաջանա, ինչը շատ կարևոր է բարձր լեռնային համայնքների համար: Բացի այդ չիրականացման դեպքում կխոչընդոտվի մարզի տնտեսական զարգացումը, չեն իրականացվի ներդրումներ՝ էներգառեսուրսների արդյունաբերական պահանջարկը չբավարարելու պատճառով, միաժամանակ կխոչընդոտվի էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրումը:

- **Տարածքի այլընտրանք:** Ջերմոցային տնտեսությանը էլեկտրաէներգիա մատակարարելու համար դիտարկվել է ՕԳ-ի ուղեգծի այլ տարբերակներ, սակայն այդ ուղեգծի անցկացումը կվնասեր գյուղացիների շահերին, քանի որ ուղեգիծն ավելի շատ տեղերում կհատվեր վերջիններիս հողատարածքների հետ, կառաջացներ օդային գծի անվտանգության գոտու խախտումներ:

- **Ընտրված տարբերակի հիմնավորումը:** Տարածքն ընտրված է Ձեռնարկողի և համայնքի համաձայնությամբ: Ենթակայանի հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների: Օդային գիծն անցնելու է համայնքային հողերով:

Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց աճի հետ զուգահեռ կարևոր է շրջակա միջավայրի պահպանման գիտակցումը, ուստի ընտրվել է մաքուր տեխնոլոգիաներով՝ էլեկտրաէներգիայով ջերմոցի սպասարկման տարբերակը: Էլեկտրահաղորդման գծերի ուղեգիծը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը, ինչպես նաև հնարավորինս քիչ առնչվի գյուղացիների հողատարածքների հետ, չառաջացնի սոցիալական խնդիրներ:

11. Նախատեսվող գործունեության հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

11.1. Էլեկտրահաղորդման գծի տեխնիկական, տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող գործունեության նպատակն է 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցումը: 110/10կՎ ԵԿ-ի միացումը 110կՎ «Ախթամար» ՕԳ-ին իրականացվելու է ճյուղավորման սխեմայով: Նախագծվող 110կՎ ՕԳ-ի ճյուղավորումը իրականացվում է գոյություն ունեցող 110կՎ «Ախթամար» ՕԳ-ի N58 Մ1M տիպի խարսխաանկյունային հենարանից: ՕԳ-ի ուղեգծի վերջը՝ նախագծվող 110/10կՎ ԵԿ-ի պորտալներն են:

Նախագծվող ՕԳ-ի երկարությունը N58 Մ1M հենարանից մինչև ԵԿ-ի պորտալները կազմում է 4609.0մ:

Հաղորդալարն ընդունված է պողպատալյումինե AC-120/19 տիպի: Անցկացվող օդային գծերը լինելու են միայն վերգետնյա:

ՕԳ-ի շանթապաշտպանությունը նախատեսված է C-50 տիպի ճոպանով: Ճոպան նախատեսված չէ միայն NN10-11 հենարանների թռիչքում, որտեղ նախագծվող ՕԳ-ն անցում է կատարում 110կՎ ՕԳ-ի տակով:

Համաձայն տեխնիկական կանոնակարգի՝ հաղորդալարի եզրաչափը հողից 7.0մ է: Նախագծում ապահովված է պահանջվող եզրաչափը:

Հաղորդալարերի մեկուսացման և ճոպանի ձգող ամրացումների համար նախատեսված են ПС70Е տիպի ապակե մեկուսիչներ:

11.2. Տրանսֆորմատորային ենթակայանի տեխնիկական, տեխնոլոգիական լուծումները.

Ենթակայանը նախատեսվում է տեղադրել Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի 7/1

հողամասի վրա՝ բնակավայրից մոտ 1,5կմ հեռավորության վրա: Ենթակայանի տարածքը զբաղեցնելու է 2000 քառ.մ, որից 155,04 քառ. մ զբաղեցնելու է շենքը:

Նախագծով նախատեսվող ենթակայանի հզորություններն են՝ 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ: Նախատեսվում է տեղադրել երկու հատ եռաֆազ երկփաթույթ ուժային տրանսֆորմատորներ 16000կՎԱ հզորության՝ 100/10կՎ լարման: 110/10կՎ ենթակայանի կառուցման համար նախատեսվում է (N4H սխեման) երկու անջատիչով բլոկ և բաժանիչներով միջակապ գծի կողմից (համաձայն «Схемы принципиальные электрические распределительных устройств подстанций 35-750кВ.Типовые решения.»):

Շանթապաշտպանությունը կայծակի ուղիղ հարվածներից իրականացվում է 110կՎ պորտալների վրա տեղադրված 5մ երկարության ձողերի միջոցով՝ 2 հատ և 1 հատ առանձին կանգնած 25մ բարձրությամբ շանթարգելով: Ըստ հաշվարկների արդյունքների՝ բոլոր սարքավորումները 110կՎ են, հաղորդալարերը ընդգրկված են այդ շանթարգելներով ստեղծված շանթապաշտպանիչ գոտում, ՓԲՄ-ի շենքը նույնպես ընդգրկված է այդ շանթապաշտպանիչ գոտում: Պորտալի բարձրությունը կազմում է 19.35մ: Գծերից եկող կոմուտացիոն գերլարումներից պաշտպանության համար իրականացվում է ուժային տրանսֆորմատորի մոտ և հավաքական դողերի վրա տեղադրվող գերլարման սահմանափակիչներով:

Նախատեսվում է տեղադրել 110կՎ-ի լարման հետևյալ սարքավորումները.

1. Էլեգազային անջատիչ BГT-110III-40/2000Y1 տիպի զսպանակավոր շարժաբերով – 2 հատ:
2. Եռաբևեռ բաժանիչ մեկ և երկու հողանցման դանակներով, համապատասխանաբար PГH-16-110/1000-40YXЛ1-2հատ և PГH-2-110/1000-40YXЛ1տիպի-3 հատ, էլ.շարժիչային շարժաբերով:
3. Հոսանքի տրասֆորմատոր ТОГФ-110II տիպի – 6 հատ:
4. Գերլարման սահմանափակիչ ОПН-П1-110 տիպի – 6 հատ:

Նախատեսվում է նաև 10կՎ պահարաններ K-26 տիպի վակուումային անջատիչներով, ընդունելով սեկցիավորված հաղորդադողային համակարգ:

ՃկՎ-ի պահարաններն են՝

1. Մուտքի պահարան K-26 տիպի ներքին տեղադրման 2 հատ:
2. Գծային պահարան K-26 տիպի ներքին տեղադրման 10 հատ:
3. Մինջղողային անջատիչով պահարան K-26 տիպի ներքին տեղադրման 1 հատ:
4. Մինջղողային բաժանիչով պահարան K-26 տիպի ներքին տեղադրման 1 հատ:
5. 10կՎ լարման տրանսֆորմատորով, ОПН-10 տիպի գերլարման սահմանափակիչով պահարան ներքին տեղադրման՝ 2 հատ:
6. Սեփական կարիքների տրանսֆորմատորի պահարան ուժային 63կՎԱ տրանսֆորմատորով և ապահովիչով 2 հատ:

Ուժային տրանսֆորմատորի 10կՎ-ի կապը ՓԲՄ-ում տեղադրված 10կՎ պահարանների

հետ իրականացվում է հաղորդադրողային կամրջակի և մալուխի միջոցով: ԲԲՄ-110կՎ հաղորդաձողավորումը նախատեսված է AC-120/19 տիպի հաղորդալարով: Ենթակայանի օպերատիվ հոսանքը հաստատուն է, որի համար տեղադրվում է ՊՈՏԹ տիպի սարքավորում, իսկ սեփական կարիքների շղթաների սնուցման համար ըստ հաշվարկների, տեղադրվում է երկու հատ TM-63կՎԱ հզորության 10/0.4-0.23կՎ տրասֆորմատոր և տեղադրվում է 10կՎ պահարանի մեջ: Ուժային և հսկիչ մալուխների մոտեցումը սարքավորումներին 110կՎ ԲԲՄ-ում նախատեսվում է 600x600մմ և 800x900մմ անցուղիներով:

110/10կՎ ենթակայանի հողանցումն իրենից ներկայացնում է 40x4մմ կտրվածքի շերտապողպատից (հորիզոնական էլեկտրոդ) և 3.0մ երկարության 50x50x5մմ կտրվածքի անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ) բաղկացած ցանց: Շերտապողպատը տեղադրվում է 0.7մ խորության վրա: Ուղղահայաց էլեկտրոդները տեղադրվում են ենթակայանի եզրագծի երկայնքով 6մ քայլով և 110կՎ գերլարման սահմանափակիչների մոտ: ՓԲՄ-ի շենքի ներքին և արտաքին հողանցման կոնտուրը երկու տեղով միացվում է 110կՎ ԲԲՄ-ի արտաքին հողանցման եզրագծին: Հողակցիչի բոլոր միացումների տարրերը և նրանց հատումները կատարվելու է եզրածածկված եռակցումով: Ենթակայանում տեղադրվող բոլոր սարքավորումների մետաղական մասերն, ինչպես նաև կոնստրուկցիաները պետք է միացվեն ընդհանուր հողանցման եզրագծին:

Լուսավորություն Նախագծով նախատեսվում է 110կՎ ԲԲՄ-ի արտաքին լուսավորություն: Լուսավորության ցանցի լարումը 380/220Վ է(ֆազա զրո) և այն սնվում է փոփոխական հոսանքի սեփական կարիքների պանելից: Արտաքին լուսավորության ցանցը սնելու համար նախատեսվում է լուսավորության խմբակային ՋՕՄ-8501 տիպի բաշխիչ վահան, որը կսնի լուսավորության ցանցը:

Արտաքին լուսավորությունն իրականացվում է «LED» տիպի լուսարձակներով որոնք տեղադրվում են մետաղական պորտալների, առանձին կանգնած շանթարգելի և նոր տեղադրվող մետաղական կանգնակների՝ 6մ բարձրության վրա: Լուսավորության ցանցն իրականացվում է BBΓԽԴ-660 տիպի 3x2.5մ² կտրվածքի մալուխներով որոնք անց են կացվում անցուղիներով մասամբ խրամուղով խողովակով: Փոփոխական հոսանքի սեփական կարիքների պանելից մինչև լուսավորության վահան իրականացվում է BBΓԽԴ-660 5x2.5մ² կտրվածքի մալուխով: Լուսավորման կայանքների համար մալուխների ընտրությունը և ստուգումը կատարվելու է լարման թույլատրելի կորստի ապահովման պայմաններով, ինչպես նաև տաքացմամբ: Նախագծով նախատեսվում է ՓԲՄ-ի բանվորական լուսավորություն: ԵԿԿ-ի, ՓԲՄ-ի լուսավորությունն իրականացվելու է տարբեր հզորությունների «LED» տիպի լուսատուներով: ՓԲՄ-ում բոլոր մալուխներն անց են կացվելու պատերով՝ փակ սվաղի տակ: Շենքի մուտքի մոտ նախատեսվում է տեղադրել

լուսավորության ցայտանթափանց լուսատուներ՝ «LED» տիպի: Անջատիչները տեղադրվելու են գետնից 1.5մ, վարդակները՝ 0.8մ, իսկ լուսավորման վահանը՝ 1.5մ բարձրության վրա:

Բոլոր լուծումները և միացումները իրականացվելու են համաձայն «ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (Հավելված 3):

12. Շինարարության փուլի տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները

Օդային գծի հորատանցքերի փորման վայրերում շինհրապարակ չի նախատեսվում, շինհրապարակը կազմակերպվելու է միայն ենթակայանի կառուցման վայրում՝ 40x35մ մակերեսով:

Մինչև շինմոնտաժային աշխատանքների սկսելը կատարվելու են կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ:

- Ժամանակավոր կենցաղ գրասենյակային տնակների տեղադրում;
- Շինմոնտաժային մեխանիզմների անհրաժեշտ սարքերի և գործիքների առաքում շինհրապարակ:
- Շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում:
- Ժամանակավոր ինժեներական կոմունիկացիաների անցկացում:

12.1 Շինհրապարակ

Շինհրապարակում լինելու են.

- ավտոմեքենաների կայանման, նյութերի տեղակայման հարթակներ,
- պահակատուն-2 հատ,
- շինտեխնիկայի և սարքավորումների, գործիքների տեղակայման հարթակներ,
- աշխատողների համար տնակ՝ հանդերձարանով և խոհանոցով,
- աշխղեկի սենյակ,
- (90x1.5) չափերի 1 շարժական սան հանգույց (բիոզուգարան)՝ լվացարանով,
- ավտոմեքենաների անիվների լվացման ցնցուղարաններ՝ 2 հատ:

Շինհրապարակն ապահովված է լինելու երկկողմանի մուտքի և ելքի հնարավորություններով, գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով, հակահրդեհային հիդրատներով, անվտանգության նախազգուշացնող նշաններով: Շինհրապարակը ցանկապատվելու է ծալքաթիթեղով: Ապահովված է լինելու ժամանակավոր հոսանքի և ջրամատակարարման ցանցերով: Շինարարության համար անհրաժեշտ էլեկտրամատակարարումը կիրականացվի դիզելգեներատորների միջոցով:

Տարածքում քանդման աշխատանքներ չեն նախատեսվում, կատարվելու է միայն հողային գրունտի հանում: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքով և բուլդոզերով:

Հենասյունների տեղադրման, հոսանքալարերի անցկացման շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսված մեքենաները և տեխնիկան աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարական նյութերը պահեստավորվելու են շինհրապարակում: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների ամրանային կարկասների պատրաստումը պատվիրվելու է: Միաձույլ

ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար համապատասխան դասի ապրանքային բետոնը պատվիրվելու է բետոնային հանգույցում, որը տարածք է բերվելու թափքը պտտվող մեքենայով: Տանիքի, հատակների և հարդարման աշխատանքները կատարվելու է ՇՆ և Կ 3.04.01 -87 - ի, ՇՆ և Կ III - 4 - 80 - ի և աշխատանքային նախագծերի պահանջներով:

Հակահրդեհային անվտանգությունը շին-հրապարակում, աշխատանքի տեղամասերում և աշխատատեղերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան հակահրդեհային անվտանգության կանոններ՝ եռակցման և այլ աշխատանքների իրականացման համար հաստատված պետստանդարտի՝ 12.1.004.76:

Մինչև շինաշխատանքների սկսելը աշխատողներին պետք է ծանոթացնել անվտանգության տեխնիկայի կանոնների հետ՝ հրահանգավորել ըստ մասնագիտությունների:

12.2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ

օդային զծի կառուցման շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝

- Հորատող՝ 2 հատ:
- Հարթեցնող՝ 1 հատ:
- Ինքնաթափ՝ 1 հատ:
- Ավտոմոբիլային ամբարձիչ՝ KC-55713-1 մակնիշի:
- Շինմոնտաժային աշխատանքների կատարման համար ընտրված է KC-45717K-3P մակնիշի աշտարակային կռունկ, սլաքի երկարությունը 30 մ, բեռնաբարձությունը՝ 25տ:
- Կցորդային բեռնատար՝ MAZ 5432 մակնիշի, կցորդ HEΦA3 9334-20 մակնիշի:
- Ավտոմոբիլային մանիպուլյատոր՝ FASSI F700B մակնիշի:
- Ավտոաշտարակ՝ АГП-28 մակնիշի:
- Ավտոինքնաթափ:

Շին տեխնիկան և սարքավորումները կարող են լինել Կապալառու կազմակերպությանը կամ վարձակալվել այլ կազմակերպություններից:

12.3 Ենթակայանի շինարարության փուլ

Ենթակայանի տարածքը մասնակի ասֆալտապատվելու է՝ տարածքի մոտ 10%-ը: Տրանսֆորմատորները տեղադրվելու են բետոնային հիմքերի վրա: Ենթակայանի տարածքում շինության ներսում տեղադրվելու են միայն ցածր լարման սարքավորումներ, իսկ բարձր լարման ուժային սարքավորումները տեղադրվելու են բաց տարածքում՝ բետոնապատ հիմքերի վրա:

Ենթակայանի փակ շինությունը լինելու է մեկ հարկանի, տանիքային ծածկով, ապահովված է լինելու անձրևաջրերի հեռացման համակարգով: Հատակների և հարդարման աշխատանքները կիրականացվեն տանիքածածկային և ապակեպատման աշխատանքներից հետո: Չմոռան պայմաններում ներքին հարդարման աշխատանքները կատարվելու են ներսում 8°C ոչ պակաս ջերմության պայմաններում:

12.4 Էլեկտրահաղորդման գծի շինարարության փուլ

ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են տիպարային մետաղական հենարաններ՝ ընդհանուր 27 հատ հենարան:

Պատվիրատուի պահանջով, հետագայում 110կՎ ՕԳ-ի պահուստային սնում ունենալու նպատակով, նախագծվող ԵԿ-ում նախատեսված է երկրորդ 110կՎ մուտքի բջիջ: 110կՎ երկրորդ շղթայի մոնտաժման համար, վերջին հատվածում նախատեսված են երկշղթա հենարաններ:

Գոյություն ունեցող N58 Մ1М ճյուղավորման հենարանից 1820մ հատվածում (ՊԿ 0+00 մինչև ՊԿ18+20) ուղեգծում նախատեսված է 11 հատ միաշղթա հենարանի տեղադրում:

Ուղեգծի 2789.0մ հատվածում (ՊԿ18+20-ից մինչև ԵԿ-ի մուտքի պորտալներ ՊԿ46+09) ուղեգծում նախատեսված է 16 հատ երկշղթա հենարանի տեղադրում:

Հենարանների տակ նախատեսված են տիպային երկաթբետոնե հիմքեր: Հիմքերի ընտրությունը կատարված է ըստ հենարանների վրա ազդող ուժերի և գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների: Հիմքի տակ գրունտը՝ 10 -15 սմ մշակվում է ձեռքով:

Երկշղթա հենարանների հիմքերի ընտրությունը կատարված է հաշվի առնելով հետագայում հենարանների վրա երկրորդ շղթայի մոնտաժումից առաջացող ուժերը:

Հիմքերի տակ նախատեսված է խճային ծածկ՝ 100մմ շերտով:

Հիմքերի տեղադրումից հետո գրունտի հետլիցքը պետք է կատարվի տոփանումով՝ յուրաքանչյուր 20սմ հետլիցքից հետո:

Ավելացած գրունտը պետք է հարթեցվի տեղում 10սմ շերտով:

Հենարանների հողակցումը նախատեսված է ճառագայթային հողակցիչներով ($\emptyset 12$ մմ տրամագծով կլոր պողպատ): Ճառագայթային հողակցիչի երկարություններն ընտրված են գրունտի էկվիվալենտ տեսակարար դիմադրության համապատասխան: Ճառագայթային հողակցիչների տեղադրման խորությունը գրունտում 0.5մ է:

Հողակցման սարքվածքի ընտրությունը կատարված է համաձայն 3602-ՌМ-II տիպարային նախագծի:

12.5 Լուսավորություն և ջեռուցում

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ), որի լուսավորությունը և ջեռուցումը կկատարվի ժամանակավոր էլեկտրական հոսանքի անցկացման՝ դիզելգեներատորների միջոցով:

12.6 Բարեկարգում

Կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

12.7 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Շինության կառուցման շին-մոնտաժային և հատուկ աշխատանքների կատարման տևողությունը հաշվարկված է CH - 440 – 79 դրույթներին համապատասխան՝ 730օր:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

1. Պլանավորում և կազմակերպում:
2. Հիմքերի նախապատրաստում:
3. Հիմքերի տեղադրում, մոնտաժում:
4. Հաղորդալարերի մոնտաժում:
5. Սարքավորումների տեղակայում, տրանսֆորմատորի մոնտաժում:
6. Շենքի կառուցում և այլն:

Գործունեության իրականացման ժամանակացույց


110ԻԿԿ ԼԱՐՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԵՆԶՈՒԿԱՆԻ և 110ԿԿ ԼԱՐՍԻՆ ՍԱՐԻ ՕՐԱՅԻՆ ԳԾԻ ՕՐԱԿԵՅՑԱՅԻՆ ՊԵՐԱՊԵՐՈՒՄԻ																																													
ԳԾ ԴՐՈՒՄ	Այնպեսպանի անվանումը	Փողային		Այնպեսպանության		Աճիկ/Վարկային		Ներհատ ժամկետ	Ներհատ ֆինանս. տարածք	1 օրվա շահույթային ցուցանիշ	Փախույթի ցուցանիշ	Այնպեսպանի ֆինանս. ցուցանիշ	Ժամկետ			ԱՄՍԱՆԻՆԻ ՏԱՐԻԿ																													
		Կապիտալի թիվ	Կապիտալ	Կապիտալի թիվ	Կապիտալ	Կապիտալի թիվ	Կապիտալ						Ապրիլ	Մայիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24							
		Կապիտալի թիվ	Կապիտալ	Կապիտալի թիվ	Կապիտալ	Կապիտալի թիվ	Կապիտալ						Ապրիլ	Մայիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34												
1	Դեպոզիտի և փողային											5	01.08.21	0.0	01.08.21	5																													
2. Պատահական ձևաբանում																																													
2	Պիդիտի անդր կապով հավանականությունը՝ Կապիտալ	1 հազ	108	0.37	0.00	0	0.0					2	01.08.21	1.0	02.08.21		2																												
3	Պատահական Պիդիտի անպատահականություն	1 հազ	108	0.00	7.97	1.10	10.0					6	02.08.21	2.0	03.08.21			6	6	6																									
4	Պատահական և Կապով անպատահական ձևաբանում	1 հազ	27	0.30	1.11	0.71	0.4					5	03.08.21	1.0	04.08.21					5	5																								
5	Պատահական ձևաբանում անպատահականություն	1 հազ	27	0.30	1.08	0	0.0					5	05.08.21	1.0	07.08.21					2	2																								
6	Պատահական ձևաբանում անպատահականություն	1 հազ	27	1.0	0.00	0.4	1.4					5	07.08.21	2.0	09.08.21					5	5	5																							
3. Պատահական ձևաբանում																																													
7	Պատահական ձևաբանում անպատահականություն	100.4	102.0	0.0	00.30	1.0	270.70					5	09.08.21	0.0	11.08.21					5	5	5																							
8	Պատահական անպատահական ձևաբանում և Կապով անպատահականություն	1 հազ	128	1.2	10.30	0.90	120.30			11	5	5	11.08.21	2.0	13.08.21																														
3.00 ձևաբանում անպատահականություն																																													
9	Կապով անպատահականություն	340	223	0	00.0	0.4	10.0					6	12.08.21	0.0	14.08.21																														
10	Պատահական և Կապով անպատահականություն	40	10	0	0.0	1.4	2.0					6	16.08.21	1.0	17.08.21																														
11	Պիդիտի անպատահականություն	7.00	6	0	1.0	2.4	2.0					6	17.08.21	2.0	19.08.21																														
12	Պատահական ձևաբանում անպատահականություն	Կապով	0	00.0	10.1	0.0	0.0					6	19.08.21	2.0	21.08.21																														
13	Պատահական ձևաբանում անպատահականություն	Կապով	0	00.0	10.1	0.0	0.0					6	21.08.21	2.0	23.08.21																														
14	Պատահական ձևաբանում անպատահականություն	-	0.00	00.0	0.4	0.0	0.0					6	23.08.21	1.0	24.08.21																														
Այնպեսպանի անվանումը													1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24									
Այնպեսպանի անվանումը													14																																

ԾԱՆՈԹՈՒՑՑՈՒՆ

Հնետուրքյան կառուցման շին - մոնտաժային և հատուկ աշխատանքների կատարման
 տնօրոշությունը հաշվարկված է համաձայն СН - 440 - 79, կիրառելով ընդհանուր
 դրույթների գործակիցները տնօրոշությունը կազմում է 730 օր: Աշխատանքների
 ժամկետները և հերթականությունը տրված են ներկայացվող ժամանակացույցում:

Հիմանական Օղակի Կազմը`

- Էլեկտրոմոնտաժող 4 մարդ
- Մեքենավար - 3 մարդ
- Բեռնազործ - 2 մարդ
- Հյուսն - 2 մարդ



							ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մեան համայնք, ցուղ Հճաշե 7/1		
1101094							ԼԱՐՄԻՆ, 2X161ԼԼԱ 290ԼԼԻԹՅԱՆ ԷԼՔԼԻԿԱՅԱՆԻ Կ 110ԿԼ ԼԱՐՄԻՆ, ՄԱՐԶ, ՕՐԱՄԵՐ, ԳԵՐ		
Անուն	Ազգ.	Քաղ.	Ծնունդ	Տեղ	Հասցե	Տնային	Փեղ.	Փայք	Փաշտիկ
					ԷԼԱՐՄԻՆԻԹՅԱՆ ԿԱՅԱՋԱՆԿԵՂՄԱՆ ԼԱՍԽԱԳԻԾ		19	1	
ՕՐԱՄԵՐԻՑԱՅԻՆ, ԳԼՐԱՆԿՈՂՈՒՄ							Երևան 2023թ		

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480* նորմերի:

13. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Նախատեսվող գործունեության շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

13.1. Ջուր

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարությունը տևելու է 730 օր, շինարարության ընթացքում աշխատելու են 11 բանվոր և 2 ինժեներատեխնիկական աշխատողներ(ԻՏԱ):

Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն, ըստ անհրաժեշտության օգտագործվելու է 3 հակահրդեհային հիդրանտների, տարածքի՝ (55x35,4) հրդեհամարման, անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{Է.ձ.}} = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ:

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ,

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 11 մարդ:

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ:

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 730օր:

$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 11 \times 0.025) \times 730 = 224.11 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,307 \text{ մ}^3/\text{օր:}$

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Հրդեհաշիջման համար ջրի սպառումն իրականացվում է մեկ կրակի մարման (3 ժամ) տևողության հիման վրա և արդյունաբերական և կենցաղային կարիքների համար ջրի առավելագույն սպառման ընթացքում այդ նպատակների համար նախատեսված ջրի սպառման ապահովման քանակով՝ $q3 = 2.5 \text{ լ/վրկ}$ ՝ ներքին հրդեհային հիդրանտի յուրաքանչյուր ռեակտիվից: Հրդեհի մարման համար օգտագործվող ներքին հրդեհային հիդրանտների քանակը՝ $n=3$: Ենթակայանի տարածքի հրդեհը մարելու համար ջրի սպառումը կլինի.

$$Q_1 = n \cdot q3 = 3 \cdot 2.5 = 7,5 \text{ լ / վ:}$$

Անիվների լվացման համար շինարարության փուլում նախատեսվում է մեքենաների լվացում՝ առավելագույնը 3 մեքենա, օրը 1 անգամ հաճախականությամբ:

Տեղադրվելու են 2 հատ լվացման կետեր, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման

ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 2 = 1.6 \text{լ/վրկ}$$

13.2. Օգտագործվող նյութեր

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր,
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Հաղորդալարերը լինելու են պողպատ-ալյումինե՝ օդային:

Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել է Գեղարքունիքի մարզի Վարսեր, Լճաշեն, Գեղամավան համայնքների տարածքներում 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները՝ շրջակա միջավայրի վրա, նախատեսել բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները:

Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող

գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները;

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալների ուսումնասիրություն՝ օդային ավազանի ներկա վիճակը, կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքները, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաները և պայմանագրերը, ՀՀ Բույսերի և կենդանիների կարմիր գրքերը, հողային և ջրային ռեսուրսների վերաբերյալ ՀՀ օրենքագրքերը, հողաբուսաշերտի հեռացման, պահպանման կառավարության որոշումները, աշխատանքի անվտանգությանն ուղղված ՀՀ օրենքները, կառավարության որոշումները, առանձին գերատեսչությունների հրամանները, համայնքների սոցիալական իրավիճակի վերլուծությունը: Գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետությանը վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

ՕԳ և ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են.

- ՕԳ և ենթակայանի շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների հետ:
- ՕԳ և ենթակայանի շինարարական աշխատանքների ընթացքում կենդանական և բուսական աշխարհի պահապանության հետ:
- Շինարարական աշխատանքների ժամանակ տարածքի հողի բերրի շերտի հեռացման և պահպանության հետ:
- Թափոնների կառավարման հետ:
- Արտակարգ իրավիճակների առաջացման հետ:
- Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Էլեկտրահաղորդման գծերի ուղեգիծը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունները:

Շինարարության փուլ: Ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման և շահագործման ընթացքում կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ:

Աշխատանքները տևելու են 730 օր՝ ըստ ժամանակացույցի:

Գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Աշխատանքների կատարման համար շինհրապարակը կազմակերպվելու է միայն ենթակայանի կառուցման վայրում:

մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին հրապարակված տեղեկագրի՝ Գեղարքունիքի մարզում 2020թ. անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակները կազմում են.

- Փոշի- 2146.51տ/տարի
- Ազոտի օքսիդ-82.9տ/տարի
- Ծծմբի երկօքսիդ-3.09տ/տարի

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. 4-րդ եռամսյակի հրապարակված տեղեկագրի՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների, Գեղարքունիքի մարզի և քաղաքների օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Իսկ Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի² ըստ բնակչության թվաքանակի համաձայն օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները² ժամկետանց են:

ՕԳ և ենթակայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում՝ օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, ինչպես նաև հողային աշխատանքների(փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով, ինչը կրում է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Համաձայն հաշվարկների՝ անկազմակերպ փոշու արտանետումները հավասար են 0,735տ/շին. ժամանակահատված կամ 0,28գ/վրկ: Շինարարության ընթացքում շինարարական տեխնիկայի արտանետումները ներկայացված է աղյուսակում:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Աղյուսակ 10

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.034	0,000025
CH (ածխաջրածիններ)	8.403	0.0078	0.0058
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.422	0.039	0,029
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.004	0,003
Անկազմակերպ փոշու արտանետում		0,28	0,735

Արտանետումների հաշվարկը ներկայացված է Հավելված 5-ում:

Շահագործման փուլում գործունեությունը օդային ավազանի վրա ազդեցություն չունի:

14.2. Հողային ռեսուրսներ

Ենթակայանի տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերական, ընդերքօգտագործման է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների: Գեղամավան գյուղի տարածքում օդային զիծն անցնելու է համայնքային հողերի միջով, որտեղ առկա են բազմաթիվ քարահավաքի մեծ և փոքր կույտեր: Վարսեր գյուղի տարածքի մի մասն անմշակ հողատարածքներ են, մյուս մասը՝ բազմաթիվ տձև, օվալաձև, շրջանաձև քարակուտակումներով հողատարածքներ են:

Հողային աշխատանքներ կատարվելու են՝ հենասյուների հիմքերի փորման և ենթակայանի կառուցման ժամանակ:

Հողային զանգվածն առաջանալու է 3մ խորության ՕԳ-ի հորատանքցքերի փորման, տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման արդյունքում: Հողային աշխատանքների արդյունքում հանվելու է 3760խմ գրունտ, որից մոտ 3700խմ-ը կատարվելու է ետլիցք, մոտ 60խմ հարթեցում տեղում՝ 10 սմ շերտով: Հողային զանգվածի մեջ հողաբուսաշերտի առկայությունը կազմում է 0.00-0,20 մետր, իսկ ավազակավերի, մանրախճի պարունակությունը 0.20-3.0մ: Հանվող ընդհանուր բուսահողի ծավալը կազմում է 187,95մ³: Հանված բուսահողն օգտագործվելու տարածքի հողային շերտի վերականգնման նպատակով:

Հողային զանգվածը և բուսահողն ամբողջությամբ օգտագործվելու է համապատասխանաբար անցքերի և խրամուղիների լցման, տարածքների վերականգնման և բարեկարգման համար:

Կայանի կառուցման ընթացքում հողաբուսաշերտի այլ խախտում չի նախատեսվում և այլ ազդեցություններ չեն գնահատվում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցությունը լինելու է նվազագույնը:

14.3. Զրային ռեսուրսներ

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ»ՄՊԸ ընկերության կողմից կատարված ուսումնասիրության՝ նախատեսվող գործունեության տարածքը բնութագրվում է որպես գրունտային ջրերի սնման, կուտակման բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լճի մեջ: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5.0-10,0մ-ից ցածր հորիզոններում: Իսկ գործունեության տարածքում՝ փորված խորություններում ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել: Գործունեության տարածքում բացակայում են մակերևութային ջրային հոսքերը, Սևանա լիճը գտնվում մոտ 4 կմ հեռավորության վրա: Ուստի գործունեության իրականացումը չի կարող անմիջական ազդեցություն ունենալ Սևանա լճի վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1876.0մ÷1986.0 մ բարձրության սահմաններում, տարածքում ձորակներ չկան, առավելագույն ելքերի առաջացման հնարավորություն և նրանցից սպառնացող ռիսկերը բացակայում են:

Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է

պատրաստի վիճակում՝ շտեմբլ, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական 1,0*1,5 չափերի բիոգուգարանից՝ լվացարանով:

Շինարարության և շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

14.4. Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածքն անտառածածկ չէ, բացակայում են ծառաթփային բուսականությունը, հենարանների տեղադրման վայրերը համայնքային գյուղնշանակության հողեր են՝ արոտավայրեր, իսկ տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման տարածքը՝ ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր են: Գործունեության ենթակա տարածքներն արդեն ենթարկվել են մարդածին ազդեցությանը: Գործունեության տարածքը շրջանցելու է պետական պահպանության անտառային հողերի տարածքները:

ՕԳ-ի կառուցման տարածքում գերակշռում են հացազգիները և տարախոտային բուսականությունը, տեղ տեղ բուսածածկն ընդհանրապես բացակայում է՝ քարակույտերի կուտակումներ են: Տարածքը երկար տարիներ օգտագործվել է որպես արոտավայր, գտնվում է մարդու ակտիվ գործունեության գոտում, ինչի պատճառով բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները:

Գործունեությանը կից չկան հատուկ պահպանվող տարածքներ և զգայուն էկոհամակարգեր:

Նկատի ունենալով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը՝ կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունները լինելու են ցածր:

Շահագործման փուլում հավանական ազդեցությունները լինելու են կենդանական աշխարհի վրա՝ կապված լուսավորության, էլեկտրասնուցման համակարգերի մագնիսական դաշտի, հենասյունների վրա թռչունների բնադրման վտանգների հետ:

Սակայն կենդանական աշխարհի ներկայացուցիչները լինելով շարժուն, համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն: Բացառություն են կազմում անթև անողնաշարավորները և այն կենդանատեսակները, որոնց ապրելավայրերը, բույնը կամ որջը կհայտնվեն հողաշինարարական աշխատանքների տեղամասերում: Ուստի այն մեղմելու համար պետք է հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը:

14.5 Թափոններ

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի, կենցաղային ադրի, մետաղական մանցորդների տեսքով:

- շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական ադրի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601

01 00 4)՝ 20մ³ ծավալով,

- կենցաղային աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 3120կգ/տարի քանակով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է (ըստ ամենաձանրաբեռնված հերթափոխի),

հետևաբար,

$$M=13*120=1.560\text{կգ/տարի}$$

Նախատեսվող գործունեությունը տևելու է 2 տարի(730օր), ուստի կենցաղային աղբի տարեկան քանակը կկազմի.

$$1560*2=3120\text{կգ/տարի կամ } 4,3 \text{ կգ/օր}$$

Առաջանալու են նաև յուղոտված լաթեր՝ սարքավորումների, մասերի մաքրման, յուղման արդյունքում:

Շահագործման փուլում՝ տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի համաձայն՝ հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 15տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի յուղընդունիչի տարողությամբ:

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 2կգ/տարի քանակով:

- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4)՝ 2,5մ³ քանակով:

- Յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (4-րդ դաս՝ 31402303 01 03 4)՝ 12մ³ քանակով:

- քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի (ծածկագիր՝ 35131100 01 00 4), ալյումինե (ծածկագիր՝ 35310105 01 99 5) և պղնձե (ծածկագիր՝ 3531030501013), համապատասխանաբար՝ 20կգ, 50կգ և 30կգ քանակներով:

Շրջակա միջավայրի վրա նշված թափոնների հնարավոր ազդեցությունը կանխարգելելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.6 Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացումը կապված է.

- եղանակային ծանր պայմանների,
- հրդեհների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացման,
- տեխնածին երևույթների, հեղուկ նյութերի արտահոսքի,

- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի՝ Գեղամավան, Վարսեր բնակավայրերի՝ 110կվ լարման օդային գծի և Լճաշեն բնակավայրի՝ 110/10կվ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման համար «Հայր և որդի Տիտիզյաններ»ՍՊԸ-ի կողմից կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ: Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում գործունեության իրականացման համար, բացակայում են: Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել հնարավոր հրդեհային իրավիճակների և այլ տարերային երևույթների(երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների ռիսկը վերահսկելու և կանխարգելու համար հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.7 Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Ներկայացվող տեղանքում՝ ելակետային իրավիճակում աղմուկի մակարդակը ցածր է, աղմուկի և տատանումների աղբյուր են հանդիսանում հիմնականում ավտոտրանսպորտը: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար սահմանվում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, քանի որ նախատեսվող գործունեության տարածքները գտնվում են բնակավայրերից մեծ հեռավորության վրա:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Շինարարական աշխատանքների ընթացքում ավտոմեքենաների և սարքավորումների շահագործումից առաջացած աղմուկի մակարդակը 80 դԲ (A)

գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Այնուամենայնիվ, հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական և հատուկ միջոցառումների կարիք չկա, նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակում և շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

14.8 Էլեկտրական և մագնիսական դաշտ

ՕԳ և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ 110ԿՎ Օդային գիծը չի կարող զգալի էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավական հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

14.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները, արգելավայրերը: Ամենամոտ հատուկ պահպանվող տարածքը «Սևան»ԱՊ-ն է, որը գտնվում է գործունեության տարածքից 4.6կմ, իսկ ամենամոտ արգելավայրը՝ 1,2կմ հեռավորությունների վրա: համապատասխան մասնագետի կողմից կատարվել է գործունեության ենթակա տարածքի ուսումնասիրություն (Հավելված 4): Տեղագնությունն իրականացվել է էլեկտրահաղորդման գծի ամբողջ տարածքով:

Նկար 14



Նշված մոտ 4,6 կմ երկարությամբ գծի մանրամասն տեղագնության ընթացքում պատմամշակութային հուշարձաններ չեն փաստագրվել: Չեն հայտնաբերվել նաև վերգետնյա հնագիտական գտածոներ:

Ենթակայանը տեղակայված է արդյունաբերական օբյեկտների տարածքում, որտեղ բացակայում են պատմամշակութային հուշարձանները և հնագիտական գտածոները:

Միաժամանակ հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

14.10 Աշխատանքի անվտանգություն և մարդու առողջություն

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը սպառնացող վտանգներ կապված.

- գործունեության իրականացման ընթացքում տեխնիկատրանսպորտային միջոցների շահագործման հնարավոր վթարների,
- տարբեր տեսակի սարքերի, տեխնիկայի անսարքության, աշխատողների վնասվածքների,
- հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման հետ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առողջության և աշխատանքի անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Աշխատողների համար առողջության և անվտանգության համար պոտենցիալ վտանգ կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) ոչ բավարար լինելու պատճառով: Այդ նպատակով շինարարության ամբողջ ընթացքում ապահովելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը: Մարդու առողջության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով գործունեության իրականացումը կազմակերպվելու է ոլորտին առնչվող ՀՀ-ում գործող օրենսդրության՝ օրենքների, կառավարության որոշումների, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են միջոցառումներ, ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

14.11 Սոցիալական ազդեցություն

Գործունեության իրականացման ընթացքում առաջանալու են բնակչության շրջանում սոցիալական խնդիրներ, սոցիալական ազդեցություններ, կապված.

- Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասներ արոտավայրերին, ճանապարհներին:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցություններ՝ կապված համայնքում նոր ենթակառուցվածքների ստեղծման և հնարավոր աշխատատեղերի բացման հետ:

Գործունեությունն իրականացվելու է Լճաշեն, Գեղամավան և Վարսեր գյուղերի վարչական տարածքներում: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային

տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Օդային գծի ուղեգիծը նախագծվում է շրջանցելով գյուղացիների հողատարածքները: Իսկ գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները: Հողի ձեռք բերման կամ փոխհատուցման հետ կապված խնդիրներ չեն առաջանալու: Օդային գծի անցկացման ժամանակ ընկերությունն իր գործողությունները կհամաձայնեցնի այն հողօգտագործողների հետ, որոնց հողատարածքներին կխանգարի շինարարական աշխատանքները:

Շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր:

Նախատեսվող գործունեությունը համահունչ է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» դրույթներին: Համաձայն ծրագրի՝ նախատեսվում է մարզում փոքր և միջին ձեռնարկությունների խթանման համար իրականացնել վարկային երաշխավորությունների տրամադրում, խորհրդատվությունների տրամադրում, գործարար ուսուցում, տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում սկսնակ և գործող փոքր և միջին ձեռնարկության սուբյեկտներին, կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչը որոշակիորեն կնպաստի սոցիալական անապահով խավի ֆինանսական միջոցների բարելավմանը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում ազդեցությունները կապված են էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակատուցման, ինչպես նաև անվտանգության գոտու պահպանման հետ:

14.12 Գումարային ազդեցություններ

Գործունեության իրականացման հետևանքով որևէ գումարային ազդեցություններ չեն կանխատեսվում:

ՇՄԱԳ հաշվետվությունը ցույց է տալիս, որ նախագիծը շրջակա միջավայրի վրա կունենա ցածր ազդեցություն, եթե իրականացվեն հաշվետվությունում ներառված առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումները: Համաձայն ՇՄԱԳ-ի, բացասական ազդեցություններն առաջանում են հիմնականում շինարարության փուլում: Շահագործման փուլում, ակնհայտ է դրական ազդեցությունը, որն է՝ էկոլոգիապես ավելի անվնաս և հուսալի էներգիայի մատակարարումը:

Գնահատելով ենթակայանի և ՕԳ-ի կառուցման ազդեցությունը (գնահատման 0-5 ցուցանիշներով) շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կարելի ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 11.

Շրջակա միջավայր	Հավանական ազդեցությունը/ A/	Ազդեցության հետևանքը/ B/	Ազդեցության գնահատումը/ A *B/	Ազդեցության աստիճանը
Շինարարության փուլ				

1.Օդային ավազան	0	0	0	չունի
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.Հողային ռեսուրսներ	2	1	2	ցածր
4.Կենսաբազմազանությ յուն	1	1	1	ցածր
5.Բնության և մշակութային հուշարձաններ	0	0	0	չունի
Շահագործման փուլ				
1.Օդային ավազան	0	0	0	չունի
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.հողային ռեսուրսներ	1	1	1	ցածր
4.Կենսաբազմազանությ յուն	1	1	1	ցածր
5.Բնության և մշակութային հուշարձաններ	0	0	0	չունի

14.13 Բարեկարգում

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

ՕԳ-ի շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն:

Ենթակայանի կառուցումը կառաջացնի լանդշաֆտի մի փոքր ծանրաբեռնվածություն, չառաջացնելով վիզուալ ազդեցություն:

Բարեկարգում. ՕԳ-ի և ենթակայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

15. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

ՕԳ-ի շինարարության ընթացքում հողերի աղտոտում կամ վնասում չի նախատեսվում, հողերի վնասը հաշվարկվում է ենթակայանի համար:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: ՕԳ-ի իրականացման ընթացքում աղտոտված արտահոսք չի առաջանում և ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

ՕՍԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

15.1 Մթնոլորտային օդ

տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտված դրամական համարժեքով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

ՕԳ շահագործման ընթացքում արտանետումներ չեն առաջանում: Արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \tau_q \Phi_g \sum \varphi_i \Phi_i$$

որտեղ՝

U-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

τ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն վերոնշյալ կարգի 9-րդ աղյուսակի՝ արոտավայրերի համար ընդունվում է 0.1:

φ_i -ն *i*-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, համաձայն նշված կարգի 10-րդ և 11-րդ աղյուսակների՝

անօրգանական փոշու համար՝ 10, ածխածնի օքսիդի համար՝ 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, ածխաջրածինների համար՝ 3.16, պինդ մասնիկների համար՝ 41.5:

Φ_i –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն՝ $\Phi_g = 1000$ դրամ:

Φ_i գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 SU_i - 2 U\theta U_i), SU_i > U\theta U_i$$

որտեղ՝

$U\theta U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումները քիչ են և կրում են ժամանակավոր բնույթ, փաստացի արտանետումներն ընդունվում են որպես $U\theta U_i$:

SU_i -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի ժամանակ առանձնացնել են շարժական և անշարժ աղբյուրները:

Շինարարության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկը, ինչպես նաև համախառնախան ցուցանիշներով արտանետվող նյութերի անվանումները ներկայացվում են աղյուսակ 12-ում:

Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատման

Աղյուսակ 12

Արտանետվող նյութի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ _i	Շ _q	Φ _g	Տնտեսական վնասը (ՀՀ դրամ)
	Si	q	Ք _i				U = Շ _q Φ _g Σ Վ _i Ք _i
Ածխածնի մոնօքսիդ	0.0000 25	3	0.000075	1	0.1	1000	0.0075
Ածխաջրածիններ	0.0058	3	0.0174	3	0.1	1000	5.22

Ագոտի օբյեկտներ (երկօբյեկտի հաշվարկով)	0.029	3	0.087	12.5	0.1	1000	108.75
Պինդ մասնիկներ	0.003	3	0.009	41.5	0.1	1000	37.35
Անկազմակերպ փոշու արտանետումներ	0.735	1	0.735	10	0.1	1000	735
Ընդամենը							886.327

Ըստ կատարված հաշվարկների՝ շինարարական աշխատանքների ժամանակ սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է 886.327 դրամ:

15.2 Հողի տնտեսական վնասի հաշվարկ

Ենթակայանի զբաղեցրած տարածքի 0, 2 հա մակերեսի համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն՝ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումների:

ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԿԳ_{\text{հող}} = U_{\text{բազա}} \times U_{\text{հող}} \times Գ_{\text{գ}},$$

որտեղ՝

$ԿԳ_{\text{հող}}$ -ն գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

$U_{\text{բազա}}$ -ն հողերի 1 մ² մակերեսի բազային արժեքն է՝ 792 դրամ,

$U_{\text{հող}}$ -ն գնահատվող հողամասի մակերեսն է 2000 մ²,

$Գ_{\text{գ}}$ -ն բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է: Ենթակայանը կառուցվում է Լճաշեն համայնքի վարչական տարածքում, որը գտնվում է XIII -րդ գոտու սահմաններում՝ գոտիականության գործակիցն է՝ 0.057:

$$ԿԳ_{\text{հող}} = 2000 \times 792 \times 0.057 = 90\,288 \text{ դրամ}$$

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$U = \text{ԾՀՎ} + U_{\text{ՎՀ}} + \text{ԾՈԻՎ},$$

որտեղ՝

U -ն ազդեցությունն է,

ԾՀՎ -ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են: Նման ծախսեր չեն նախատեսվում:

ԱՎՀ-ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում՝ ԿԳհող:

ԾՈՒՎ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$Ա = \text{ԾՀՎ} + \text{ԿԳհող},$

$ԱՎՀ = 0 + 90288 = 90288$ դրամ

Ընդհանուր տնտեսական վնասը կկազմի $90288 + 886.327 = 91174,32$ դրամ:

Հաշվարկված գումարները Ձեռնարկողի համար որևէ պարտավորություն չի առաջացնում:

16. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի՝ Գեղամավան, Վարսեր, Լճաշեն բնակավայրերի տարածքները՝ 110կվ լարման օդային գծի և 110/10կվ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման համար: Ենթակայանը կառուցվելու է Լճաշեն գյուղի տարածքում, օդային գիծն անցնելու է Գեղամավան և Վարսեր գյուղերի վարչական տարածքներով:

Գործունեությունն իրականացվելու է պահպանելով ՀՀ կառավարության՝ 2000 թվականի մայիսի 18-ի «1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնների» N 249 և 1998 թվականի մայիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը» N313 որոշումների պահանջները և գործող սանիտարահակաճարակաբանական կանոնների ու նորմերի, ինչպես նաև 2009 թվականի ապրիլի 2-ի «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N363-Ն որոշումների պահանջները: ՕԳ-ի կառուցման բոլոր տարրերը պետք է համապատասխանեն ազգային ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգի (ՏԿ)-ի պահանջներին:

Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս հաշվի են առնվել նաև 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՀ կառավարության N1943-Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի VIII բաժնի պահանջները և ցուցումները՝ գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանը նվազեցնելու նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու:

Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն

վերջինները կլինեն կարճաժամկետ: Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, տարածքի կենսաբազմազանության, մարդու առողջության պահպանման հետ:

Գործունեության իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնց ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա կլինեն նվազագույնը:

16.1. Օդային ավազան

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- ենթակայանի կառուցման շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կկատարվի գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել պարբերաբար ստուգումներ,
- բացառել թափոնների այրումը բաց տարածքներում:

16.2. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում է.

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,
- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է առանձին,
- հանված բուսահողը պահեստավորվելու է անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում, այն օգտագործվելու է տեղում՝ տարածքի բարեկարգման համար,
- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա, բացառելով տարածքում բոլոր տեսակի հեղուկ նյութերի և քսուքների պահումը,
- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,
- շինարարական շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:
- ՕԳ-ի կառուցման ավարտից հետո նախատեսվում է.
- մշտական օգտագործման համար տրամադրվող հողերի վերականգնում,
- ժամանակավոր օգտագործման համար տրամադրված հողերի վերամշակում:

16.3. Ջրային ռեսուրսներ

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շերով),
- ենթակայանի կառուցման շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ անձրևաջրերի հեռացման և հավաքման համար,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզաբանի ջուրը,
- պարզաբանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ դասի բետոնանյութը բերվելու է պատրաստի վիճակում՝ թափքը պտտվող մեքենայով:

Կեղտաջրեր.

- Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացման համար տեղադրել բիոզուգարան:
- Բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

16.4. Կենսաբազմազանություն

Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել «Սևան»ԱՊ-ին,

- խախտված հողաբուսաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով,

- թռչնի բների մեջ ձվերի կամ ձագերի հայտնաբերման դեպքում, պետք է դադարեցվեն աշխատանքները մինչ նրանց չվելը,

- շինարարական աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար:

Շահագործման փուլ.

- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով:

16.5. Թափոններ

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա թափոնների հնարավոր վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից ,

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից, անհրաժեշտության դեպքում կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-շինարարական թափոնները՝ շինադրի տեսքով կքավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը հավաքել տարածքում տեղադրված պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր:

Շահագործման փուլում հնարավոր վթարներից կամ վերանորոգման արդյունքում հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցվելու է 6x8մ չափերի, մոտ 1,5մ խորության 2 հատ յուղընդունիչներ (հոր)՝ յուղահեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է երկաթբետոնի հիմքով, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու են ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

16.6. Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հակահրդեհային հիդրատներով(3 հատ),

- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին,

- հեղուկ նյութերը շինհրապարակում պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- օդային զծերը կառուցել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) գլուխ VI 46.1 կետի՝ չբնակեցված տարածքներում ապահովվելով գետնից 6 մ բարձրություն,

- բացառել հենասյունների տեղադրումը սողանքային հատվածներում,
- ապահովել օդային գծերի հաղորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, մթնոլորտային և քիմիական ներգործությունների նկատմամբ կայունությունը,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել,

Շահագործման փուլ. օդային գծերի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման փուլում նախատեսվում է.

Օդային գիծ.

- հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,
- ՕԳի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ,
- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,

- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից,

- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Ենթակայան.

- ենթակայանն ապահովված է լինելու ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով:

16.7. Աղմուկ և թրթռում

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկական օգտագործել միայն սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

Շահագործման փուլ.

- ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը:

Ենթակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

16.8 Պատմամշակութային հուշարձաններ. շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները ,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը,
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն տեղական իշխանությունների և պատասխանատուների կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքում:

Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

16.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- աշխատողներին ապահովել անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի

հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային վահանակներով, հակահրդեհային հիդրատներով,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնության վայրում խոտանված սարքերի կուտակումները,

- բացառել մարդկանց ներկայությունը ամբարձիչի սլաքի շարժման վտանգավոր գոտում, վտանգավոր գոտին ցանկապատել դեղին կամ կարմիր գույների ժապավենով,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, մի քանի շինարարական տեխնիկական միջոցների աշխատանքը մեկ տեղամասում,

- շինարարական աշխատանքների ժամանակավոր հրապարակները կազմակերպել բուսածածկ չունեցող մասերում,

- շինհրապարակն ապահովել լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլ. շահագործման փուլում գործունեության իրականացման համար նախատեսվում է.

- էլեկտրահաղորդագծերում կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,
- օդային գծի բոլոր հենարանները համարակալվելու, նշագրվելու և գունավորվելու է՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 3-րդ գլխի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներին համապատասխան,
- էլեկտրահաղորդման գծերի վրա առկա լարման մասին համապատասխան

- նշագրում՝ մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով,
- պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով,
- էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:

16.10. Սոցիալական.

- գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու,
- օդային գծի ուղեգիծը նախագծվում է շրջանցելով գյուղացիների հողատարածքները,
- գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները:

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 13 մարդ, որոնք աշխատելու են 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման փուլում նախատեսվում է.

- գյուղատնտեսական մշակահողերի միջով անցնող, մինչև 1000 Վ լարման էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:
- հողօգտագործողների գյուղատնտեսական տարածքներով անցնող էլեկտրահաղորդման գծերի նորոգման և վերակառուցման անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքները կատարել հողօգտագործողների համաձայնությամբ, պահպանելով գյուղատնտեսական տարածքների օգտագործման պիտանի վիճակը և վերականգնումը՝ նախնական տեսքով:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական միջոցներ նախատեսել համայնքային խնդիրների և գյուղացիների հողատարածքների հետ կապված խնդիրների լուծման համար: Ձեռնարկողի ներկայացուցիչները համաձայնվեցին, խոստանալով աջակցել համայնքային խնդիրների լուծմանը:

16.11. Բարեկարգում և կանաչապատում

Գործունեության տարածքի լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները,
- նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում կանաչապատման աշխատանքներ չեն նախատեսվում:

17.Մոնիթորինգ (շինարարության և շահագործման փուլեր)

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Ձեռնարկողի և Հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտային օդում, ջրային, հողային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:
- Աշխատանքների անվտանգ կատարման համար աշխատողների ապահովում համապատասխան գործիքներով, սարքավորումներով, անհատական պաշտպանության միջոցներով, չափիչ և ստուգիչ սարքերով:
- Վերահսկել և արգելել տրանսպորտային միջոցների երթևեկումը դաշտային տարածքներում, շինարարական աշխատանքների ժամանակավոր հրապարակները կազմակերպել բուսածածկ չունեցող մասերում՝ շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնելու նպատակով:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:

- «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ»ի վերահսկում՝ սահմանված՝ 2006 թվականի նոյեմբերի 23-ի, N 1939-Ն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համաձայն:
- Ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսել ՀՀ կառավարության N 363-Ն 02.04.2009թ. որոշման պահանջների համաձայն:
- Էլեկտրահաղորդման գծերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության գոտու պահպանում:
- Օդային ու մալուխային գծերի, ենթակայանի, պարբերական զննումների կազմակերպում ու անցկացում՝ այլ անձանց կյանքի ու գույքի անվտանգությունն ապահովելու նպատակով:
- Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգի ներդրում՝ հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում, ատեստավորում:
- Էլեկտրահաղորդման գծերի վերահսկումն իրականացնել Էլեկտրակայանքներն սպասարկող մասնագիտացված սպասարկող անձնակազմի միջոցով՝ ապահովելով վերջիններիս անվտանգության պայմանները:
- Աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակության պարբերաբար զննում և այլն:
- Գյուղացիներին պատկանող հողատարածքներում գյուղատնտեսական աշխատանքների կատարման չխոչընդոտում՝ ՕԳ-ի ուղեգծի անվտանգության հարակից հատվածներում:
- Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները՝ համաձայն համայնքի հետ կնքած պայմանագրի: Կանոնավոր հանդիպել համայնքի ղեկավարության հետ փոխադարձ հետաքրքրության խնդիրները քննարկելու համար:

18. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է ՇՄԱԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

Աղյուսակ 13

№	Գործունեության տարածքում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող	Բնապահպանական միջոցառումների նույնիսկ նախատեսվող ծախսերը/հազ. դրամ/
1.	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է. - ենթակայնաի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - տարածքում նյութերը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,	Կապալառու	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

		- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, - բացառել թափոնների այրումը բաց տարածքներում:			
2.	Հողային ռեսուրսներ	Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. - հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան: Մասնավորապես. - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է առանձին, - հանված բուսահողը պահեստավորվելու է անմիջական հորատանցքերի	Կապալառու	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

		հարևանությամբ՝ ծածկված վիճակում, այն օգտագործվելու է տեղում՝ տարածքի բարեկարգման համար, - շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա, բացառելով տարածքում բոլոր տեսակի հեղուկ նյութերի և քսուքների պահումը, - շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, - շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: ՕԳ-ի կառուցման ավարտից հետո նախատեսվում է. - մշտական օգտագործման համար տրամադրվող հողերի վերականգնում, - ժամանակավոր օգտագործման համար տրամադրված հողերի վերամշակում:			
3.	Ջրային ռեսուրսներ	Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.	Կապալառու	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

		- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի, - հողային գրունտի խոնավացման և ջրցանի համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը կբերվի ավտոցիստեռով՝ պայմանագրային հիմունքներով, - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերի հոսքաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսվել պլաստմասե տարա՝ պարզաբան, - պարզաբանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում, - շինարարության համար անհրաժեշտ			
--	--	--	--	--	--

		բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում: Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրի հեռացման համար տեղադրել բիոզուգարան: -Բիոզուգարանի մաքրում կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:			
4.	Կենսաբազմազանություն	Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է . - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել «Սևան»ԱՊ-ին, - գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվրոպական պայմաններում վերարտադրության	Կապալառու	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

		նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով, - շինարարական աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար: Շահագործման փուլ. ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնակադրումը բացառելու նպատակով:			
5.	Թափոններ	Շինարարության փուլում թափոնների հնարավոր վնասակար ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսներ մեղմելու նպատակով նախատեսվում է. - խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումը՝ տարածքում, - շինարարական նյութերի մնացորդները (մետաղական մասեր) հավաքվելու են հատուկ տարողությունների	Կապալառու	«Գրին Սոլուշն» ՍՊԸ	Ներառված է շինարարության և շահագործման ծախսերում

	մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից, անհրաժեշտության դեպքում կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, - շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն կտեղափոխվեն և կտեղադրվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - կենցաղային աղբը հավաքել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ, - շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվել աղբավայր: Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ			
--	--	--	--	--

		տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է. - կառուցվելու է յուղընդունիչ հոր (բաք)՝ երկաթբետոնի, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ, - հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին, - հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին, - յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված			
--	--	---	--	--	--

		ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:			
6.	Արտակարգ իրավիճակներ	Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է. - պահպանել հրդեհաանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովել հակահրդեհային հիդրատներով, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, - հեղուկ նյութերը շինարարական հարթակում պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - օդային գծերը կառուցել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) գլուխ VI 46.1 կետի՝ չբնակեցված տարածքներում ապահովելով գետնից 6 մ բարձրություն, - բացառել հենասյուների տեղադրումը սողանքային հատվածներում,	Կապալառու	«Գրին Սոլուշն» ՍՊԸ	Ներառված է շինարարության և շահագործման ծախսերում

		- ապահովել օդային գծերի հաղորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, մթնոլորտային և քիմիական ներգործությունների նկատմամբ կայունությունը, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: Շահագործման փուլ.օդային գծերի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման փուլում նախատեսվում է. -ՕԳ-ի հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում, -ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ, - ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից, - տեխնաձին աղետների(քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման,		
--	--	--	--	--

		էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը, - ենթակայանն ապահովված է լինելու ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով:			
7.	Աղմուկ և թրթռում	Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները: Շահագործման փուլ. - ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաճոպանների պարը, թրթռումը:	Կապալառու	«Գրին Սոլուշն» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

8.	Պատմամշակութային հուշարձաններ.	Հուշարձանների պահպանման համար նախատեսվում է. • Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները , • Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը, • Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից, • Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը, • Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն տեղական իշխանությունների և պատասխանատուների կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքում:	Կապալառու	«Գրին Սոլուշն» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում
9.	Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	Շինարարության փուլում աշխատողների առողջության և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է. - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային	Կապալառու	«Գրին Սոլուշն» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

	անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» № 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), - աշխատողներին ապահովել անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և			
--	--	--	--	--

		վնասվածքների առաջացումը, - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, - շինհրապարակն ապահովել հակահրդեհային հիդրատներով, - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված սարքերի կուտակումները, - վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, - շինհրապարակն ապահովել լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, - աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության			
--	--	--	--	--	--

	պահանջներին համապատասխան, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: Շահագործման փուլ. Շահագործման փուլում գործունեության իրականացման համար նախատեսվում է. - էլեկտրահաղորդագծերում կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին, օդային գծի բոլոր հենարանները համարակալել, նշագրել և գունավորել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 3-րդ գլխի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներին համապատասխան, Էլեկտրահաղորդման գծերի վրա առկա լարման մասին համապատասխան նշագրում՝ մարդու առողջության և անվտանգության նպահպանման նպատակով, -պահպանել լարերի ամենացածր կետից			
--	---	--	--	--

		մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով:			
10.	Սոցիալական	Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր: Շահագործման փուլում նախատեսվում է. - գյուղատնտեսական մշակահողերի միջով անցնող, մինչև 1000 Վ լարման էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան, - հողօգտագործողների գյուղատնտեսական տարածքներով անցնող էլեկտրահաղորդման գծերի նորոգման և վերակառուցման անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքները կատարել հողօգտագործողների համաձայնեցությամբ, պահպանելով գյուղատնտեսական տարածքների օգտագործման պիտանի վիճակը և վերականգնումը նախնական տեսքով:	Կապալառու	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում

11.	Բարեկարգում և կանաչապատում Լանդշաֆտ - բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները, - հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները: Բարեկարգում. - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից, -գործունեության տարածքը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը, -կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:	Կապալառու	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարության ծախսերում
-----	--	-----------	---------------------	------------------------------------

Գործունեության իրականացման համար «Գրին Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար հատկացնել տարեկան՝ մինչև 300,0 հազ. ՀՀ դրամ:

19. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)

Աղյուսակ 14

Շինարարության փուլ (4 ամիս)	Պարբերականությունը (ժամանակամիջոցը), վայրը	Մոնիթորինգի եղանակը	Պատասխանատու	Գումարը
1. Օդային ավազան արտանետումները մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փոշի, ծխազագեր)	Շինհրապարակում Ամենօրյա Ամիսը 1 անգամ	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում չափազրում՝ համապատասխան մասնագետի կողմից	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
2. Կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի Փոփոխությունների վերաբերյալ հսկողություն	Օդային գծի ուղեգծի և հարակից տարածքում Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետի ներգրավում	Կապալառու «Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
3. Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով	Շաբաթը մեկ անգամ	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
4. Հողի PH-ի և այլ որակական հատկությունների ուսումնասիրություն, -Հողի բերրի շերտի պահպանման ստուգում,	Տարին մեկ անգամ Պարբերաբար	Լաբորատոր ուսումնասիրություն Տեսողական ուսումնասիրություններ	Կապալառու «Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
5. Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում, կենցաղային աղբի հեռացում	Գործունեության տարածքից, շինհրապարակից:	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու	Ներառված է շինարարական

	Զպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին			աշխատանքների արժեքում
6. Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության վերահսկում	Գործունեության տարածքում, շինհրապարակում Ամենօրյա	Տեսողական ուսումնասիրություններ, անվտանգության կանոնների պահպանում Պարբերաբար	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
7. Աղմուկի մակարդակի տատանումներ	Շինհրապարակում Ամենօրյա, շաբաթը մեկ անգամ	Աղմկաչափ	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
8. Շինարարական նյութերի ներկրման, տեղափոխման անվտանգության հսկողություն	Գործունեության տարածք՝ կախված շինարարական նյութերի տեղափոխման պահանջի անհրաժեշտությունից	Ուղեգծի և տարածքի ուսումնասիրություններ	Կապալառու	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
9. Մարդու առողջություն և անվտանգություն	Շինարարության ընթացքում	Շինարարության տարածքում, հարցումների իրականացում, համապատասխան ցուցատախտակների տեղադրում	Կապալառու «Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
Շահագործման փուլ				
1. Էլեկտրահաղորդման գծերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության գոտու պահպանում	Օդային գծերի ուղեգծերի ուղղությամբ	Տեսողական ստուգումներ, համապատասխան ակտերի կազմում՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան	Կապալառու «Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում

2.Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու, «Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շինարարական աշխատանքների արժեքում
3.Արտակարգ իրավիճակների հսկողություն՝ վթարային իրավիճակների նվազեցման նպատակով	Ենթակայանի տարածքում Համապատասխան հակահրդեհային միջոցների առկայություն	Ստուգումներ	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ Համապատասխան գերատեսչական մարմին	Ներառված է շահագործման ծախսերում
5.Սոցիալական	Գործունեության իրականացման ընթացքում	Զխաթարել ՕԳ-ի անվտանգության գոտուն հարակից գյուղացիներին պատկանող տարածքներում գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը: Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները, որոնք ամրագրված են համայնքի հետ կնքված պայմանագրում:	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ	Ներառված է շահագործման ծախսերում

20. Հետնախագծային վերլուծություն

Մոնիթորինգի և միջոցառումների իրականացման արդյունքում կազմվում է հետնախագծային վերլուծության պլան, որում ներկայացվում է մոնիթորինգի արդյունքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, գնահատված հնարավոր ազդեցություններին: Որևէ բացասական շեղման կամ անհամապատասխանության դեպքում ձեռնարկողը նախատեսելու է լրացուցիչ միջոցառումներ աշխատանքների կարգաբերմանն և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Դրանք ևս ներառվում են հետնախագծային վերլուծության պլանում:

21. Հանրային ծանուցում և քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1325-Ն որոշման Բ կատեգորիայի նախատեսվող գործունեությունների համար նախատեսվում է չորս փուլով հանրային ծանուցման և քննարկումների իրականացում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Համաձայն ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են երեք փուլով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում՝ նախնական գնահատման և փորձաքննության, ինչպես նաև հիմնական գնահատման (3-րդ) գործընթացներում: Հանրային քննարկմանը ներկա են եղել Սևան համայնքի ներկայացուցիչը, ազդակիր բնակավայրերի վարչական ղեկավարները, բնակիչներ, գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները: Հանրային քննարկումների երրորդ փուլում հանրությանը ներկայացվել է նախագծային փաստաթուղթը և ՇՄԱԳ հաշվետվությունը:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումները և հարցադրումները, մասնավորապես կապված օդային գծի ուղեգծի վերջնական տարբերակի հետ: Քննարկումների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը կոդմ են արտահայտվել օդային գծի կառուցմանը: Հավելված 6:

22. Բողոքների ընթացակարգ

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների, օդային ավազան արտանետումների, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև գյուղացիների հողագործական աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ բողոքներին արձագանքելու, շեղումները, դրանց պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

23. Փակման փուլ

Ընկերության կողմից գործունեության հնարավոր դադարեցման դեպքում վերջինիս կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը ներառում է.

- ✓ սարքավորումների, էլեկտրասյուների ապամոնտաժում,
- ✓ ենթակայանի և օդային ուղեգծի տարածքների կարգաբերում, նախկին տեսքի բերում:

Ձեռնարկողի կողմից կատարվելու է պայմանագրերի երկկողմանի դադարեցում, ապամոնտաժվելու են բոլոր սարքավորումները, էլեկտրահաղորդման հենասյուները, էլեկտրահաղորդման գծերը: Ենթակայանի տարածքում կապամոնտաժվեն տրանսֆորմատորները, յուղահեռացման համակարգերը և այլ սարքավորումները: Ապամոնտաժված պիտանի սարքավորումները կվաճառվեն, իսկ խոտանը(ոչ պիտանի մետաղական մասեր, լարեր և այլն) կտեսակավորվի և կհանձնվի համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Բետոնյա մնացորդները կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին: Տարածքը կբարեկարգվի, կբերվի նախկին տեսքի՝ խոտածածկ մակերեսով:

Գրականություն

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ Ռազմավարություն
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամաններ:
3. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույց:
4. ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
5. ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N87 արձանագրություն:
6. ՀՊ.485.13130.2021:
7. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն:
8. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆԿադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 2 նոյեմբերի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Լճաշեն 7/1 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի ներդրման պայմանագրեր 18/05/2022թ. սմ 3207, Սևան համայնքի ավագանու 14.06.2022թ. թիվ 76-ա որոշում, Սևան համայնքի ղեկավարի 22.06.2022թ. թիվ 582-Ա, 30.06.2022թ. թիվ 629-Ա որոշումներ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք 15.07.2022թ. թիվ 49, Հասցե տրամադրելու մասին առցանց որոշում 24.10.2022թ. թիվ 1236-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-040-0201-0043

Մակերեսի չափը (հա)՝ 0.56


Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության


Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


ՎԿԱՅԱԿԱՆ N 02112022-05-0002, գաղտնաբառ՝ DCDKTA9FACKA


Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով


Հավելված 2.
Օդային գծի ուղեգիծը
















ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

№ ՏՊ-510-110/0052-1

«22» 09 2022թ.

ՀՀ Երևան, Ա. Արմենակյան փողոց 127

**ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ
ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

/Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի
դեկտեմբերի 25-ի N 523-Ն որոշման Գլուխ 27-ի հաստատված կարգի/

**Տրվում է
Պատճենը**

«ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությանը
«Գեղամա» մ/ճ-ի գլխ.ճարտարագետ
Հ.Մանուկյանին
«ԻՍՍՏ» տնօրեն Ռ. Ասկարյանին
«Էլեկտրաէներգետիկական համակարգի
օպերատոր» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Գ. Բալյանին

Սպառողի հասցեն և գործունեությունը

Մարզ Գեղարքունիք, համայնք Լճաշեն
հասցեում կառուցվող ջերմոցային
համալիրի էլ. մատակարարման համար

Պահանջվող հզորությունը (կՎտ)

24000


Սնման կետի լարումը (կՎ)

110

1. Վերը նշված հասցեում կառուցել 2x16 ՄՎԱ հզորության 110/10 կՎ լարման ենթակայան և համապատասխան հզորությունների 10/0.4 կՎ ենթակայաններ:
2. 10/0.4 կՎ ենթակայանները միացնել 110/10 կՎ ենթակայանի 10 կՎ ԲՍ-ներին առանձին քջիջներով՝ կառուցելով 10 կՎ էլեկտրահաղորդման գծեր:
3. 110/10 կՎ ենթակայանի սնումն իրականացնել «Ախթամար» 110 կՎ օղային գծի մոտակա հենարանից (անհրաժեշտության դեպքում փոխարինելով համապատասխան տիպի)՝ կառուցելով մոտ 6 կմ երկարության 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ:
4. Ճյուղավորման երկրորդ հենարանին տեղադրել 110 կՎ լարման (ԲԻՃ-1) 110 կՎ բաժանիչ:
5. Կառուցվող 110 և 10 կՎ էլեկտրահաղորդման գծերի ուղեգիծը համաձայնեցնել համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:

6. Ռելեական պաշտպանությունը և ավտոմատիկան (ՌՊԱ) նախատեսել համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի N42-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրատեղակայանքների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջների, տեխնիկական կանոնակարգի, ՌՊԱ սարքվածքների ծավալը և սկզբունքները համաձայնեցնելով «ՀԷՑ» ՓԲ և «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունների հետ:
7. Նախագիծը համաձայնեցնել «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի, «Գեղամա» մ/ճ-ի գլխավոր ճարտարագետի և «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի հետ:
8. 110 կՎ լարման ճյուղավորման սկզբում՝ 2-րդ հենրանի մոտ, տեղադրել և օրինականացնել ավտոմատ հաշվառման համակարգում աշխատող հաշվառք իրականացնող հաշվառքի սարքեր և GSM մոդեմ դեպի «ՀԷՑ» ՓԲԸ սերվեր տեղեկատվության հոսք ապահովելու համար:
9. Սնուցումը կիրականացվի քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության և «ԻՍՍ» տնօրինության հետ կնքած էլ. էներգիայի մատակարարման պայմանագրի առկայության դեպքում:

- Տեխնիկական պայմանների կադրման ժամկետը 1 (մեկ) տարի է:
- «15» 02 2022թ տրամադրված բաշխման ցանցին միացման № ՏՊ-510-110/0052 տեխնիկական պայմանները համարել անվավեր:
- Աշխատանքները իրականացնել համաձայն նախագծի, լիցենզավորված կազմակերպության միջոցով:



Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սևանի տարածաշրջանում իրականացրածտեղագնության արդյունքները

Սույն թվականի մարտի 11-ին «Գրին Սոլուշն» ընկերության պատվերով տեղագնություն իրականացրեցինք Սևանի տարածաշրջանում: Այստեղ՝ Գեղամավան, Վարսեր և Լճաշեն գյուղերի վարչական տարածքներում ընկերությունը պետք է իրականացնի բարձրավոլտ էլեկտրահաղորդման օղային գծի շինաշխատանքներ: Էլեկտրահաղորդման գծի առաջին՝ հյուսիսային կետը գտնվում է Գեղամավան գյուղի ծայրամասում (40.553951, 44.891310), որը հատելով Երևան-Սևան մայրուղին անցնում է Վարսեր գյուղի վարչական տարածք և հասնում հարավում մինչև Լճաշենի սկզբնամաս (40.516842, 44.890920): Ընդհանուր երկարությունը մոտ 4.5 կմ է: Տեղագնություն իրականացրեցինք էլեկտրահաղորդման գծի ամբողջ տարածքով: Գեղամավան գյուղի տարածքում գիծը անցնելու է ներկայումս մշակվող հացահատիկային կուլտուրաների արտերի միջով, որտեղ ստկա են բազմաթիվ բարահավաքի մեծ և փոքր կույտեր: Վարսեր գյուղի տարածքի մի մասը անմշակ հողատարածքներ են, մյուս մասը՝ բազմաթիվ տձև, օվայաձև, շրջանաձև բարակուտակումներով հողատարածքներ են:

Նշված մոտ 4.5 կմ երկարությամբ գծի մանրամասն տեղագնության ընթացքում պատմամշակութային հուշարձաններ չեն փաստագրվել: Չեն հայտնաբերվել նաև վերգետնյա հնագիտական գտածոներ:

ԳԱԱ Հնագիտության ազգայության

ինստիտուտի գիտաշխատող՝



Հ. Բադալյան

09.03.2023թ.

Օդային ավազանի աղտոտման հաշվարկները շինարարության փուլում

Օդային գծի շինարարության ընթացքում առաջացող արտանետումների հաշվարկ

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում հորատող, հարթեցնող և ինքնաթափ մեքենաների: Փորման-բեռնման աշխատանքները իրականացվում՝

4 ամիս x 22 օր/ամիս x 8 ժամ/օր = 704 ժամ (88 օր):

Հաշվարկները կատարված են համաձայն “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

$Q_{\text{ф.р.}} = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times P6 \times B) \times 106/3600$ տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1):

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4³

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Օդային գծի շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 3760մ³, հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ 410,2 տ, կկազմի 6204տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

6204տ : 730 ժամ/շին. ժամանակամիջոց = 8,5 տ/ժամ.:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

$Q_{\text{ф.р.}} = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.5 \times 8,5 \times 1.0 \times 0.6 \times 10^6/3600 = 0.28$ գ/վրկ, կամ՝

$0.28 \times 3600 \times 730 : 10^6 = 0,735$ տ/շին. ժամանակամիջոց:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի⁴ հիման վրա:

Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա ներկայացվում է դիզելային վառելիքով:

Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO ₂	CH	ՑՕՄ	CO	N ₂ O	CO ₂ ⁵	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Շինարարության ընթացքում շահագործվելու են հորատող, հարթեցնող, ինքնաթափ մեքենաներ: Շինարարական տեխնիկան աշխատելու է շինարարության ընթացքում մոտ 1 ամիս (26 օր, 208 ժամ):

Հաշվի առնելով ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են փորձագիտական գնահատականների հիման վրա ընդունված ցուցանիշները, ըստ որոնց դիզելավառելիքի քանակները հետևյալն են ընդունվել.

- շինարարական տեխնիկա՝ 0.08 տ/օր, ընդամենը՝ 0.08 տ/օր x 26 օր = 2,08 տ;

Ընդամենը՝ 2,08 տ:

Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /208ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.034	0,000025
CH (ածխաջրածիններ)	8.403	0.0078	0.0058
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.422	0.039	0,029
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.004	0,003


⁴Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Core Inventory of Emissions in Europe” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան՝

⁵ Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առնվել:

Անկազմակերպ փոշու արտանետում		0,28	0,735	
---------------------------------	--	------	-------	--

Հավելված 6

Հանրային քննարկման արձանագրություն/3-րդ քննարկում/, մասնակիցների ցանկ



Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Ս. Օհանյանը հարց բարձրացրեց՝ Վարսեր և Գեղամական համայնքների տարածքներով օդային գծի անցման ուղու գյուղացիների տեղեկացվածության հետ, նշելով որ անպայման հաշվի առնվի գյուղացիների շահերը:

Վ. Թեպեիկյանը պատասխանեց, որ տեղադրվելու է 27 հենարան, որից մեկը դրվելու է սեփական տարածքում, մնացածը՝ համայնքային հողերում: Նշեց, որ յուրաքանչյուր հենարանի տեղադրման ժամանակ, եթե առաջանա խնդիրներ, համընկնումներ, կտեղեկացվեն գյուղացիներին, կհամաձայնեցվեն: Պահպանվելու է անվտանգության գոտին՝ 20մ:

Մ. Մկրտչյանը նշեց, որ հենասյունների տարածքների հողատեսքերի նպատակային նշանակությունը կփոխվեն էներգետիկայի: Նշելով, որ ձեռնարկողի կողմից պետք է նախատեսվեն որոշակի ֆինանսական միջոցներ՝ համայնքներում առաջացող խնդիրների լուծման համար:

Ջենարկման մասնակիցները պահանջեցին, որ համայնքի հետ անպայման քննարկվի օդային գծի վերջնական տարբերակի ուղեգիծը, անվտանգության գոտու և գյուղացիներին պատկանող հողային տարածքների հետ համընկման հնարավորությունները:


Մ. Մկրտչյանը նշեց, որ հստակեցված ուղեգծերը կներկայացվեն և կհամաձայնեցվեն համայնքների և գյուղացիների հետ:

Մ. Մկրտչյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով որ համայնքը դեմ չէ գործունեության իրականացմանը, հաշվի առնելով բնակավայրերի բնակիչների կարծիքները:

Վարող՝ Սևան համայնքի աշխատակազմի
քաղաքաշինության և հողաշինության
բաժնի պետ Մ. Մկրտչյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝
Նախագծող Վ. Թեպեիկյան

Արձանագրող՝
Մ. Մկրտչյան



Մասնակիցների ցանկ

«Գրին Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գեղամական, Վարսեր, Լճաշեն բնակավայրերի վարչական տարածքներում 110կվ լարման օդային գծի և 110/10կվ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումներ /3-րդ հանրային քննարկում/։ 16.05.2023թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Հանգե Քույրիկյան	Խոշ Խոշ ԱՊԸ	055881771	Քույրիկյան
2.	Քաղաքացի Թեմիսթոկլե	ՀՀ	034959095	Թեմիսթոկլե
3.	Կարեն Ղևոնդյան	Դ. Հ. Յ.	099 684868	Կարեն
4.	Լևոն Աղբաբյան	Վարսեր Բնակավայր	07760 0020	Լևոն
5.	Օսկար Օսկարյան	Ավել Եղեղնաբեր	092 0213 32	Օսկար
6.	Արամ Օհանյան	ՀՀ Գեղարքունի մարզի Կոնյալի աշխատանք	094778966	Ա. Օ.
7.	Լևոն Քաղաքացի	Գրին Սոլուշնս՝ ՎՊԸ	099430008	Լևոն
8.	Գրիգոր Կոնյալի	Գ. Կոնյալի	077-43.23-47	Գրիգոր
9.	Կարեն Կաղաքացի	Գ. Լճաշեն	093 656888	Կարեն
10.	Քաղաքացի Մանուկյան	Ավել Եղեղնաբեր	095 577 577	Քաղաքացի
11.	Բաժնյա Կաղաքացի	ՀՀ Կոնյալի, ՎՊԸ	083 146499	Բաժնյա
12.	Նուբե Նուբեյան	Կոնյալի, ՎՊԸ	094 008800	Նուբե
13.	Գրիգոր Կաղաքացի	Լճաշեն Կաղաքացի	098007911	Գրիգոր
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				



Ամերիաբանկ ՓԲԸ
Վազգեն Սարգսյան 2
Ջեռախոս՝ (+37410) 561111
Ֆաքս՝
Էլ. փոստ՝ info@ameriabank.am

Տպված է՝ 14/06/2023 18:00 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 000043

Ամսաթիվ	14/06/2023	Նույնացուցիչ	72bfe87f-e8e4-4039-80c8-acef68a14982
Քաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1570075335300100	900005000196	AMD	400,000.00
Վճարողի անվանում	«ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ		
Վճարողի բանկ	Ամերիաբանկ		
ՔՎՅՅ	08624375		
Տարածաշրջանի/ՅՏ կոդ	74		
Շահառուի անվանում	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի իրականացման համար լիցենզիա տալու համար/Ա,Բ.Գ ենթակետեր/		
Գումարը բաժնորդ	Զորս հարյուր հազար դրամ		
Նպատակ	Պետ. տուրք նախատեսվող գործունեության փորձաքննության գործընթացի իրականացման համար		
Ստորագրող	HAKOB AZARYAN		
Ստորագրության կարգ	I, II		
Ամսաթիվ	14/06/2023 16:12:48.000		
Սարքի անվանում	Ameria Token		
Սարքի սերիալ N	FDY9713258		
Ստորագրություն	556372		

Կատարված է